

8129

Surfacing book 2
Zorinograd Feb 1978

LX.

281.6

V-41


1908p.

37 04. NOV 2009

ՀԵԽՈՎՆԴ Վ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԽՆԴԻՐԸ

Ա.



Կ. ՊԱԼԻՍ
ՅԱԱԳՈՒԹԻՒՆ Զ. Ն. ԳԵՐԳԵՐԵԱՆ

1908

281.6
5-41
ար

ՏԵՍ. 80 03

ՂԵԽՈՆԴ Վ. ՄԱՔՍՈՒՔԵԱՆ

ԵՐՈՒԱՇԱՂԵՄԻ ԽՆԴԻՐԸ

Ա.

Ա. ՊՈԼԻՏՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ
1908

26.06.2013

8129

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Օգտաւելով Մամուլի ազատութենէն, որոշեցի
հետզհետէ հրատարակութեան՝ տալ Երուսաղէմի Ա.
Յակոբեանց վաճքին մէջ վերջին հինգ տարիներու
տեղի ունեցած տխուր գէպքերուն ամփոփուքը, ի-
րենց ծագումը, պարագաները, զանազան անպաշտօն
ու պաշտօնական անձերու կատարած գերերը, իս
անձիս, մանաւանդ մօտաւորապէս քառասուն տա-
րիներու գործունէութեանո գէմ յերիւրուած անխիզճ
զրպարտութեանց շարժանիթները. մէկ խօսքով,
մինչեւ ցարդ հասարակութենէն գաղանի պահուած
անորակելի մեքենայութիւնները: Այս հրատարակու-
թեանց կը ձեռնարկեմ այն պատճառով որ հիմայ ձե-
ռնհաս ու Ասհմանագրական Ազգ. Երեսփ. ժողովի
մը սեղանը բերուած է Երուսաղէմի խնդիրը, իր տաշ-
րողջութեամբ:

Այս առթիւ պարտք կը զգամ երկու խօսք ուղ-
ղել պատուարժան ընթերցաններուս, իրենց անկախ
ու անկողմանակալ գատառատանին յանձննելով խնդրողն
ամբողջութիւնը:

Երուսաղէմի խնդիրը, որ մինչեւ ցայսօր կը զբա-
ղեցնէ Մամալն ու Ազգ. Վարչութիւնը, գժրադդա-
բար տակաւին բանաւոր լուծում մը չէ զտեր. ընդ-
հակառակն, հետզհետէ աւելի կնճռուած է, պաշօ-
նական ու նպատակաւոր ճնշումներով ու խեղաթիւ-
րումներով, ինչպէս նաև լրագրական անհիմ ու
ստայօդ հրատարակութիւններով, որոնց գէմ անհնար



7056-56

եղած էր բարձրացնել արդար բոզոքի ձայնու, պետական թէ ազգային պաշտօնական արգելվէս պայմաններու տակ: Այսպէս, հասարակութիւնը խնդրոյն խական վիճակին անտեղեակ մնացած է ցարդ:

Խնդիրը ծագում առած է 1903 Փետր. 16ի Բարեկենդանին Ս. Յակոր պատարին մէջ տեղի ունեցած կոփամարտի գալչիակական միջադէպէն, և այս առթիւ Տ. Յարութիւն Պատրիարքին հեռագրական հրաժարականով Ազգ. Կեդր. Վարչութեան ատեանը հանոււած է: Այս երկու պարագաներուն մէջ ալ ու է մասնակցութիւն չունենալէ զատ, ջանացած եմ անմիջապէս առաջքն առնելու անոնց: Սակայն, Միար այն փոքրաթիւ խմբակը, որ այդ միջադէպն ու Պատրիարքական հրաժարականը յառաջ բերած էր, յաջողեցաւ քանի մը միամիտ միաբաններ խարբալել և փոքր կուսակցութիւն մը կազմելով վանքին մէջ Միաբանութեան խաղաղութիւնը վրդովել: Նոյն այդ խոռվայոց խմբակն է որ իր գատապարտելի արարքը պարտկելու համար հաշոււական խնդիր մը ստեղծեց: Առոնց արարքները գատապարտուեցան ի սկզբան Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ հեռագրերով ու պաշտօնագրերով, և սակայն, ի վերջոյ, յանկարծական մտքի յեղաշրջումով մը վարչութեան կողմէ կարեւորութիւն ընծայուեցաւ հաշոււական խնդրին և վերջ ի վերջոյ կեդրոնացուեցաւ յանդրաւի իմ անձիս վրայ և պէտք տեսնուեցաւ Պոլիս գալուս: Ես որչափ որ թէ՛ ի սկզբան և թէ՛ ի վերջոյ պատրաստականութիւն յայտնած էի Պոլիս գալու, գայթակղութիւնները միանգամ ընդ միշտ բառնալու համար, սակայն, Տ. Յարութիւն Պատրիարքի պաշտօնական արգելքին բախեցայ, վանքին կարգ մը կենսական խնդիրներուն կարգադրութեան համար հոն մնալու

անհրաժեշտ գտառուած ըլլուլով: Դժբաղդաբար, Ազգ. Պատրիարքարանը, առա ու սիալ տեղեկութեանց վրայ հիմնուած, չխղճեց կառավարութեան առջև զիս ամբաստանել իրրե խոռվարար ու զեղծարար և յաջնղեցաւ կայս. Իրատէ հանել Պոլիս կոչուելուս:

1903 Մայիսին մէջ Պոլիս կուգամ և Վարչութեան կը հրաւերուիմ ի դիմաց Տ. Յարութիւն Պատրիարքին ներկայացնել երուսաղէմի վանքին հաշիւները, Նորին Սրբազնութեան զեկուցման համոձայն: Վարչութեան անգամներէն Հաշոււեքննիշ Յանձնաժողով մը կազմուեցաւ ինձի գէմ կանխակալ կարծիք-ներով լեցուած անգամներէ, որ սակայն զիս յնդունեց իր ներկայութեան իրրե Տեղեկարեր—Ներկայացուցիչ Տ. Յարութիւն Պատրիարքին և ո՛չ իրու ամբաստանեալ: Խնդրոյ առարկայ եղող բոլոր հաշիւներն ու իր գործառնութիւններս, անաչառ ու մանրակրկիտ քննութեան մը բովէն անցան, երկիցս և երիցս վերտքնութեամբ, և նոյն իսկ երուսաղէմէն հոս րերուած հակառակորդներուս գրաւոր թէ բերանացի գիտողութիւնները նկատողութեան առնուելով: Վերջապէս, յետ երկար ու խորհրդաւոր ձգձգումներու, որոնք գրեթէ երկու տարի տեւեցին, Յանձնաժողովը արձակեց վճիռը, իր տեղեկագրով հաստատելով թէ՛ Տ. Ղեկունդ Վ. ՄԱՔՍՈՒԻՏԵԱՆ ՀԱՇԻԻԿ ԽՈՅՍ ՏՈՒԱԾԶ Ձէ, թէ՛ իր ԳՈՐԾԵՐՈՒԻՆ ՄԵԶ ԶԵՂԾՈՒՄ ԶԿԱՅ, և թէ՛ ընդհակառակն, հակառակորդներուս ամբաստանութիւնները ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՆ ՔՄԱԾԻՆ ու ԿԱՄԱՅԱԿԱՆ թուանշաններէ հիւսուած, և ԿԱՆԽԱՄՐՏԱԾՈՒԹԵԱՄԲ-ՄՏՏՔԵԼՔ ՄՏՏՔԵԼՔ ՊՊՏՈՐԵԼՈՒ նպատակու պատրաստուած, արդիւնք ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻԵԱՆ և ԶԱՐԱՄԸՏԸՈՒԹԵԱԱՆ:

Խառն ժողովը, փոխանակ այս տեղեկագրին վրայ

իր վճիռը տալու, ինչպէս որոշուծ էր կոնյաւաւ բոլոր անդամներուն բաշխել տալով անձիք մէջէկ օրինակ, ընդհակառակն Քաղ. Ժողովի Ա. Ատենապէտ Գարեգին էֆ. Նորատունկեանի նախաձեռնութեամբ կազմուած Ատենապետաց Յանձնաժողովի^(*) անունով և իր ձեռքով ներկայացուած բանաձեռով մը խնդիրը կայլափոխուի, տեղեկագիրը մէկդի կը գրուի, և կորոշուի Երուսաղէմ պատուիրակութիւն մը դրկել, հաշուական խնդիրը ՎեթջնԱՊԻՍ ՓԱԿՈՒԱԾ հոչակելով։

Այդ բանաձեւն է որ 1907ի Մարտի վերջերը տեղական Ազգ. Թիերթերուն մէջ հրատարակութեան կը տրուի իրեւ Խառն Ժողովոյ որոշում, առանց ինձի պաշտօնապէս հաղորդելու։ Կամայական այս բանաձեւին մէջ բոլոր խնդիրները խեղաթիւրուած գըտնելով պարտաւորեցաց հետզհետէ հերքմնագրեր ու բողոքագեր ներկայացնել Խառն Ժողովին։ Որո՞ք զըժմաղգարար ամենքն ալ բարձի թողի եղան։ Թէւ այն ատեն փորձեցի հրատարակել իմ բողոքներս ու դիտագրերս, ոտկայն, Ազգ. Պատրիարքարանը բոնակալութեան շրջանին իրեն հայթալիթոծ միջոցներէն օգտուելով և Մամուլին վրաց ճնշում ի գործ գնելով, յաջողեցաւ խեղդել արդար բողոքի ձայնու, միւս կողմէ աննպաստ հրատարակութիւնները թե-

(*) Որուն անդամներն էին Տ. Տ. Մեսրոպ եւ Վահրամ Արքեպիսկոպոսները, Գարբիէլ Նորատունեեանեւ Տիրան Աշուան Էֆէնտիները, Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսը հիւանդութեան պատճառով՝ իր տեղը նշանակած էր Տ. Ռիքեան Աւագ Քահանան. Եւ սակայն անոր տեղ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսը կը կոչուի անդամակցութեան, անտարակոյս անոր համար որ բացարձակ հակառակորդ մըն էր։

ւասկելով՝ միաբանական մեծամասնութեան հանրագրութիւնները, բողոքները և ուրիշ բոլոր գրութիւնները ծածկելով և հակառակ որոշումներ հրատարակել տալով։

Ներկայ գրքոյկիս մէջ ամփոփած եմ վերոյիշեալ բանաձեւին պատճէնն ու իմ բողոքագրերս ու հերքումներս։

Յաջորդ գրքոյկով մը պիտի հրատարակեմ այդ բանաձեւին Երուսաղէմ զլկուած պատուիրակներուն (Տ. Վահրամ Արքեպ. և Արիս Էֆ. Ֆէսմեան) կատարած գործերը, յայտնի հակառակորդներուս ձեռքով պատրաստուած թշնամական տեղեկագրերը, և ասոնց քննութեան համար կազմուած Բ. Ատենապետաց Յանձնաժողովին գործերը, իմ գրաւոր բացատրութիւններս և հերքումներս, և նոյն Յանձնաժողովին վերջին տեղեկագիրը, վերջերանհրատարակուած տեղական Ազգ. օրաթերթի մը մէջ։ Տեղեկագիր, որուն դէմ 14 Նոյ. 1908 թուականով բողոքագիրս մատուցած եմ Ազգ. Երեսփ. Գողովին։

Իսկ Բարեկենդամնի ծանօթ կոփամարտէն մինչեւ Ա. Ատենապետաց Յանձնաժողովոյ բանաձեւին թուականը տեղի ունեցած դէպքեոը և ասոնց վերաբերեալ գրութիւնները, Միաբանական հանրագրերը, Վարչութեան հակառական պաշտօնագրերը և ուրիշ յարակից գրութիւնները և վաւերաթուղթերը յաջորդաբար հրատարակութեան պիտի տամ։

Կ. Պոլիս, 1 Դեկտ. 1908





Ա Յ Տ Շ Ե Վ

ԱՐԵՋԻՆ ԱՏԵՆԱՊԵՏԱՑ ՅԱՆՉԱԺՈՂՈՎՈՅ ԲԱՆԱՉԵԼԻՆ

→→→→→

Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովը՝ ո ս ա մ ջ ի ա չ ա ց ու ն ե ն ա լ ո վ Ս. Ե ր ո ւ ս ա լ է մ ի վ ա ն ո ւ ց ե ր կ ս տ ա ս ա մ ե ա յ (1893 Մայիս 1 է ն ց փ ե ր ջ Ապրիլ 1905) մատակարարութեան հաշուեցոյց երը և նոյն ժամանակաւ միջոցի մէջ ի նորոյ կառուցեալ կալուածոց շինութեանց հաշիւներն, առ այս կարգեալ քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագիրը ու անոր ներկայացեալ ամեն թղթեր ու հաշիւներ, Ս. Աթոռայ կանոնագրութիւնը որ հաստատեալ է ու վաւերացեալ Միաբանութենէն և Ազգ. Ընդհ. Ժողովէն ի նիստ Մարտ 1888ի և որ կը տրամադրէ.

«Յօդ. 31ի մէջ Տնօրէն Ժողովոյ պաշտաման կը պատկանի, հաւանութեամբ միշտ Ս. Պատրիարքի, Ս. Աթոռոյ վարկը պահելու համար ի հարկին փոխառութեան պէտքն ու պայմանները սահմանել, կալուածական գնումն ու վաճառումն ընել . . . :

«Յօդ. 32. Տնօրէն Ժողովը ամեն ամսագլուխ պաշտօնէից հաշիւները կը քննէ, չորս ամիսն անգամ մը Ս. Աթոռոյ ելեւմտից վիճակն ստուգելով հարկա-

ւոր տնօրինութիւնները կ'ընէ, ամեն տարեգլուխ անցելոյն հաշիւները կը փակէ, և յաջորդին ելմտացոյցը (պիւտճէ) կանխաւ յարդարելով՝ բացատրական տեղեկագրութեամբ կը ներկայանայ Միարանական Ընդհանուր ժողովութեամբ:

«Յօդ. 33. Տնօր. Ժողովը պարտի ներկայացնել Միար. Ընդհ. Ժողովին բոլորեալ տարւոյն ելմտական ճշգրիտ վիճակը բաղդատամամբ խնդրեալ ելմտացոյցի (պիւտճէ), և ի մասնաւորի փոխառութեանց և կալուածական գնմանց և վաճառմանց և պարսուց վճարման նկատմամբ ի գործ դրուած միջոցներն և արդիւնք նոցին։ Յաջորդ տարուան ենթադրեալ ելմտացոյցն և ելեւմտից հաւասարակշռութեան համար որոշուած միջոցները։

«Յօդ. 34. Տնօրէն Ժողովոյ անդամք չեն կրնար ստանձնել այն պաշտօններ, որք իրենց համարառութեան ներքեւ կը գտնուին, ինչպէս նաև չեն կրնար միանգամայն Տնօրէն Ժողովոյ անդամք և Ընդհանուր Ժողովոյ Ատենապետ գտնուիլ։ Իսկ եթէ երբէք ստանձնեն այնպիսի պաշտօն, կը դադրին նոյն միջոցին Տնօրէն Ժողովոյ անդամակցութենէ։

«Յօդ. 35. Ս. Աթոռոյ ամեն տեսակ ելեւմտաքը ստանձնեալ ելմտացոյցին համաձայն կը գտնածուին կամ կը վճարուին ելեւմտից Տեսչին ձեռօք. իսկ ելմտացոյցէ դուրս արտասովոր հասութից գանձումն և ծախուց վճարումը կը լինի Տնօրէն Ժողովոյ մասնաւոր և պատճառաբանեալ որոշմամբ և Ս. Պատրիարքի պաշտօնագրով։

«Յօդ. 36. Ս. Աթոռոյ փոխառական գործողութիւնք Ելեւմտից Տեսչին ձեռօք կը կատարուին՝ Տնօրէն Ժողովոյ որոշումն և Ս. Պատրիարքի պաշտօնագրով ստանձնել յետոյ։

«Յօդ. 8. Որոյ մէջ ըսուած է որ եթէ Միարանք ուզեն անշարժ կալուած գնել կամ կառուցանել, կը պարտաւորին կանխաւ զեկուցանել Ս. Աթոռոյն և կատարել վերսոնշանակեալ օրինական գործողութիւնները (վագֆի վերածել, ևայլն) հակառակ պարտգայի մէջ պարտազանց կը նկատուին և ըստ այնմ պարտ ու պատշաճը կը տնօրինուի։»

Վերահասու եղաւ, որ այդ տաներկու տարուան մատակարարութեան միջոցին մեծաքանակ գումարներ, որք գոյացած են արժեթղթոց և կալուածոց վաճառումներէ և բացառիկ նուիրատուութիւններէ, առնուելէ ու գործածուելէ յետոյ, տակաւին, այն է 1905 Ապրիլ 30 թուականին, վաճ.քը մնացորդ պարտք ունի 32,627 Օսմ. ոսկի, որուն 14,034 Օսմ. ոսկին տոկոսաւոր և կալուածական շինութեանց հաշիւէն պարտք ցոյց կը տրուի, չուրչ 10,000 Օսմ. ոսկի տոկոսաւոր պարտքեր, որոց վրայ կը բարգուին տարուէ տարի տոկոսներ և մատակարարութեան բացերն, ևայլն։

1. Նկատելով որ առաջին տարը տարուան (1893—1903) հաշուեցոյցերը Տնօրէն Ժողովոյ անդամոց սոուրագրութիւնը կը կրեն և վաւերացուած են Ս. Պատրիարքի կողմէ և որ այդ հաշիւներն իրենց տումարներն ունին ըստ օրինի ու տեղի ունեցած են զանազան պաշտօնէից միջոցաւ ու ամփոփուած Ելեւմտից Տեսչի ձեռամբ, հաշուեցոյցեր սակայն, որ պէտք է անցնին Միարանութեան Ընդհ. Ժողովոյ բովէն (Յօդ. 32)։

2. Նկատելով որ յետագայ 1903—4 և 1904—5 երկու տարւոյ հաշուեցոյցները Տնօ. Ժողովոյ քննութիւնէն չեն անցած ու չեն կրեր ու է ստորագրութիւն և իրը այն՝ պարտաւորութիւն է զանոնք զնել

ու բազդատել հաշուետումարաց հետ, պարտաւորութիւն որ կը պատկանի Տնօրէն ժողովոյ (Յօդ. 32):

3. Նկատելով որ այդ 12 տարիներու մէջ կալուածական վաճառումները հասկնեալ տնօրինութեամբ կատարւած են, որպէս ի մէջ այլաց (Փետր. 1900) վանքին Աղեքսանգրիոյ մէջ ունեցած 4431 կանգուն մի կարեւոր կալուածին վաճառումն, որոյ համար շուրջ 1800 ոսկոյ անբացատրելի գումար մը գօմիսիօն և ծախք անցուած է, և գործադրուած է առանց աճուրդի կամ հրատարակութեան և առանց տեղւոյն առաջնակարգ ազգայնոց խորհուրդն առնուելու ու այնպէս Ս. Աթոռը ձեռքէ հանած է ամենաընտիր գետին մը ամենանուազագոյն գնով:

4. Նկատելով որ ելմտացոցի (պիւտձէ) կիրառութեան հոգ չէ տարուած և իւրաքանչիւր տարի տեղի ունեցած հասոյթներն ու ծախքերը չեն բազդատուած ելմտացոցի հետ, համարատուութեան տեղեկագիրները չեն պատրաստուած, խնայողութեան միջոցներ չեն խորհուած ու այսու չէ յարգուած կանոնագրութեան 32րդ և 50րդ յօդուածներու տրամադրութիւնները:

5. Նկատելով այլ սակայն որ փոքր ինչ համակերպութիւն միաբանական կանոնագրի և շրջակացնութիւն ու հեռատեսութիւն, բաւական պիտի ըւլար Ս. Աթոռոյ ելեւմոից հաւատաբակչութիւնը ձեռք ըերեւու ու Աղեքսանգրիոյ կալուածը վաճառուելէ յետոյ ապահովելու վանքին ապագան առանց ոոր պարտքերու գիզման:

6. Նկատելով որ կալուածական գնմունք շատ անգամ քմահաճոյ կերպով եղած են ելեւմոից տեսչի միջոցաւ, ընդհանրապէս առանց Տնօրէն ժողովոյ գիտութեան և Ս. Պատրիարքի հաճութեան, և դիտութեան ենթակայ են:

7. Նկատելով որ կալուածական շինութիւնք նմանապէս տեղի ունեցած են առանց ու և է քօնթ-րոլի, միմիկայն Տ. Ղեւոնդ Վրդ. Մաքսուտեանի միջոցաւ, որ օրինաւոր հաշուետումար չէ բռնած, և եթէ ունեցած է երբէք, մէջտեղ չեն, և որ չմատուցոնիր վաւերական ընկալագիր կամ այլ ինչ առ ի ապացոյց իրապէս վճարուած դրամոց, ծախքեր՝ որոց համագումարը կ'անցնի 40,900 Օմ. ոսկոյ կարեւոր գումարը:

8. Նկատելով որ և ոչ մէկ երկրի օրէնք կը թուլատրեն ընդունիլ ցան ու ցիր թղթերու հիման վրայ կազմուած հաշուեցոցցեր իր օրինաւոր հաշիւ ու հետեւարար վաւերականութիւն ու ստորագրութիւն ձեռք բերելու համար պէտք կաց տեղական քննութեան մը՝ յարաբերութեան մահուելով ի պահանջել հարկին այն անձանց հետ, որք առնչութիւն ունեցած են իրեւ շինուածանիւթոց հայթայթիչ, կամ իրեւ ճարտարապետ և այլ ըստ կարգի:

9. Նկատելով որ իրաց այս անստոյգ և ստգտանելի վիճակին պատասխանատուութիւնը գլխաւորաբար կը ծանրանայ Տ. Ղեւոնդ Վրդ. Մաքսուտեանի վրայ, որ 25 տարի շարունակաբար ստանձնած է Տնօրէն ժողովոյ ատենապետութեան և ելեւմտից Տեսչութեան կրկին պաշտօններն, ըլլալով միանգամայն համարատու և համարառու, հակառակ կանոնագրութեան վերոյնշանակեալ 34րդ յօդուածին և որ վայելած ըլլալով Ս. Պատրիարքի և Տնօրէն ժողովոյ անսահման վստահութիւնը և իր մօտէն գիտակ՝ վանքին նիւթական կացութեան ու հաշիւերուն, յատկապէս ուշագիր ըլլալու էր վաճառմանց գործառնութեան, մատնանիշ ընելու էր մատակարարութեան յոռի ուղղութիւնը և փոխանակ հաշուոց

յետաձգման՝ նախանձախնդիր հանդիսանալու էր ինքն իսկ համարատութեան կանոնաց անթերի գործադրման յօրինակ այլոց և յօգուտ Ս. Աթոռոյ:

10. Ըստ որում հարկ ի վերաց կայ այդ Ս. Աթոռոյ պարտուց աճեցման առջեւն առնուլ ու ելմը տացացը հաւասարակշռել, միջոցներն ընտրել, որոց ձեռնարկելու համար անհրաժեշտ է նաև 1905—1906 և 1906—1907 տարւոյ, այսինքն ի վերջ Ապրիլ 1907 հաշուեցոյցները տեսնել, վանքին ելեւմտից վերջնական վիճակին պատկերն ունենալ ի ձեռին, անցընելով կալուածոց շինութեան հաշիւը Ս. Աթոռոյ հաշուետումարաց մէջ:

11. Նկատելով որ ամեն հաստատութիւն երբ իւր կանոնագրի գործադրութենէն կը շեղի ու համարառութեան նախանձախնդիր չըլլար, ոչ միայն կը դադրի յառաջադիմելէ, այլ և կ'առաջնորդուի գէպ ի խորխորատ, որ այս տեսակէտով գոհունակութեամբ գիտուելու է այն նախանձախնդրութիւնը որ միաբանք ցոյց կու տան հաշուոց քննութեան ու կարգադրութեան մասին:

Կ'առաջարկէ ներկայել տալ 1893—1903 տասն տարւոյ հաշիւները միաբանութեան ընդհանուր ժողովոց վաւերացման:

Կը վերագրանէ յԵրուսաղէմ 1903—1904 և 1904—1905 երկու տարուան հաշուեցոյցերն, որպէս զի նոր ընտրելի Տնօրէն ժողովը քննէ ըստ օրինի ու բաղդատէ զայն հաշուետումարաց հետ, և յետոյ Միաբանութեան ժողովոյ համէ ըստ վերնոյն:

Կը յանձնարարէ որ Ս. Աթոռը շուտով պատրաստէ նաև ցվերջ Ապրիլ 1907 երկու տարուան հաշուեցոյցերն ու Միաբանութեան ընդհ. ժողովոյ անցնելէ յետոյ, զրկէ Ազգ, կեդր, Վարչութեան՝

հանդերձ յետագայ շրջանի ելմտացոյցով ու տեղեկագրով մը, որ պարունակելու է պարտուց բարձման առաջարկներ, պատկերացնելով վանքին ամեն կարգի հասոյթներն ու ծախքերը, կալուածոց և սեփականութեանց ցուցակներով, պարտապահանջից անուններովն ու պայմաններովը:

Անհրաժեշտ կը տեսնէ վերակազմութիւնը Ս. Աթոռոյ վարիչ մարմնոց պարտք դնելով անթերի գործադրել Միաբանութեան կանոնադրութիւնը և խոյս տալ այսուհետեւ ըստ կարեւոյն կալուածներ ծախելէ կամ փոխանակելէ:

Պարտաւորութիւն կ'զգայ մին եկեղեցական և միւսն աշխարհական երկու պատուիրակներ յԵրուսաղէմ զրկել, որ պաշտօն ունինայ, ըստ Վարչական հրահանդի աջակցիլ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի և օգտակար կը գտնէ որ կանխաւ նորա հաճութիւնն ևս առնուելով գուրսը պաշտօն վարող միաբաններէն գէթ մէկ քանին հրաւիրուին վերադառնալ յԵրուսաղէմ իրենց աշխատակցութիւնը նուիրելու համար վանքին:

Կ'որոշէ Նորին Սրբազնութեան ուշագրութեան ենթարկել կալուածական շինութեանց հաշիւներն յարակից ամեն թղթերով՝ որպէս զի ի ներկայութեան վերոյիշեալ պատուիրակներու տեղական քննութիւնն ու ձարտարապետական գնահատութիւն մը կատարելով յայտագրէ իւր և նորընտրելի Տնօրէն ժողովոյ կարծիքն սոյն հաշուոց ընդունելութեան մասին ու անցընել տայ շինութեանց հաշիւները վանքին հաշուետումարաց մէջ:

Պատասխանատու կը գտնէ գլխաւորաբար զՏ. Ղեւոնդ Վրդ. Մաքսութեան իրաց անկերպարան վիճակին շփոթ կացութեան ու անդոհացուցիչ արդեանց:

Եւ յուսալից ու ակնկալու որ Միաբանութիւնը
խոհեմ ու հաշտ ոգևով պիտի ընթանայ ու իրեն կէտ
նպատակի պիտի ընտրէ վանքին բարեկարգութիւնը
ու վերականգնումը, նիւթապէս ու բարոյապէս, միշտ
օրինակելի ուղղամտութեամբ ու կանոնապահու-
թեամբ, կը փակէ վերջնականապէս երուսաղիմայ
վանուց հաշուական խնդիրը:

Հրատարակութեան տրուած 15 Մարտ 1907 թուականաւ:

→→→30←←

Ահաւասիկ իմ՝ բողոքագրերս, ժամանակին մտ-
առուցուած.

Ա. Անապատիւ Սրբազն Պատրիարք Հայր,
Նախազան Պատկ. Խառն Ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան

Վերջին օրերս լրագրաց մէջ կարգացի Առենա-
պետաց Պատ. Յանձնաժողովոյ անուամբ Պատկ. Խառն
Ժողովին ներկայացուած գիրը, որուն մէջ բա-
նաձեւուած նկատողութիւններն ու առարկութիւն-
ները բնաւ չեն համոպատասխաներ իրայ խիսկան
ու ճշգրիտ վիճակին, և հետեւաբար չէլին կընար
հիմ կազմել նոյն գրոյն մէջ եղած առաջարկութեանց,
որք փոխանակ երուսաղէմի Ս. Աթոռոյն վիճակը
բարւոքելու և խնդրոյն կարգագրութեան ու լուծ-
ման ծառայելու, ընդհակառակն կը կնճռուտեն զայն
ի վկաս Ս. Երուսաղէմին և Ազգին: Եւ ըստ որում
յիշեալ բանաձեւին մէջ Ս. Երուսաղէմի Աթոռին և
միաբանութեան ներկայ անկերպարան վիճակին գըլ-
լաւոր պատասխանատուութիւնն ինձ վերագրուած
էր, անտես առնելով վարչական հաշուեքննիչ յանձ-

նաժողովոյ երկամեայ քննութեանց արդիւնքը և իմ
ու միաբանութեան իրաւունքներն ու բողոքները,
այս պատճառաւ պարտաւորեցայ ի լուսաբանութիւն
խնդրոյն և իրաց վիճակին, ի պաշտպանութիւն ի-
րաւունց և պատոյս, և յօգուտ Ս. Աթոռոյն, Միա-
բանութեան և Ազգին՝ գիտողագիր մը պատրաստել,
զոր Պատկ. Խառն Ժողովոյ յաջորդ նիստին պիտի
կարենամ մատուցանել: Ուստի կը կանխեմ ներկայս
ուղել Զեր Բ. Սրբազնութեան, խնդրելով որ,
Պատկ. Խառն Ժողովը իր վերջնական տնօրէնութիւնը
ընելէ առաջ, հաճի ուշագրութեան արժանացնել
զայն, գոնէ օրինաւորպէս յարգելով իմ անհատական
և հանրական իրաւունքներս, յօգուտ Ազգին և Ս. Ե-
րուսաղէմին, որուն անձնուիրաբար ծառայած եմ
այնքան երկար տարիներէ հետէ, գիտնալով որ, բը-
նաւ երբէք խուսափող մը չեմ եղած ո՛չ մէկ հաշուե-
տուութենէ, ո՛չ մէկ համարատուութենէ և ո՛չ մէկ
քննադատութենէ, բաւական է որ այդ ամենը ան-
կեղծօրէն տեղի ունենայ յօգուտ և ի շինութիւն Ս.
Երուսաղէմի, և ո՛չ թէ ի վկաս Անոր կամ ի գոհա-
ցումն մասնաւորաց շահուց և քինախնդրութեանց:

Համբուրիւ Ս. Ազոյ Բ. Սրբազնութեանդ

ՊԵՏՐՈՎԻ. ԱՐԴԻ. ՄԱ. ՔԱՅԱԿԱՆ

Ա. Պոլիս 28 Մարտ 1907



2

ՀՀ 8205

7056-56

Ս. Ամենապատիւ

Տ. Տ. Մադաֆիա Ա. Պատրիարք Հայոց
Նախազան Պատկ. Խառն Ժողովոյ Ազգ.
Կեդր. Վարչութեան

Ի. Կ. ՊՈԼԻՒ

Ս. Երուսաղէմի Հաշուոց Քննիչ Վարչական
Յանձնաժողովի տեղեկագրի մասին՝ յանուն Ստենա-
պետաց Յանձնաժողովոյ՝ Խառն Ժողովոյդ մասուց-
ուած բանաձեւը իրը Կեդր. Վարչութեան որոշում
հրատարակուած տեսնելով ի լրագիրո, պարտաւորե-
ցայ ներկայ գիտողագիրս ուղղել Պատկ. Վարչու-
թեանդ ի լուսաբանութիւն։

Քննիչ Յանձնաժողովին գրեթէ երկամեայ աշխա-
տութենէ յետոյ պատրաստուած տեղեկագրի ընթեր-
ցումէն՝ երկու գլխաւոր իրողութիւնք, որոց մասին
բոլոր անդամք համաձայն են, որոց կը տեսնուին։
Առաջին թէ՝ հաշիւներու մէջ զելցում, հետեւաբար
և իմ կողմանէ զեղծարարութիւն չը կոյ, և երկրորդ
թէ՝ իմ մասին զեղծարարութեան տմբաստանութիւնք,
զորա քանի մը միաբաններ ըլրած էին, բայրութին
զրաբարտութիւններ էին՝ քմածին ու կամոյական թուա-
նշաններէ հիւսուած և կանխամտածութեամբ մտենք
պիտուելու նպատակաւ պատրաստուած՝ արդիւնք
հակառակութեան և չարամտութեան, ինչպէս յայտնի
յիշուած է տեղեկագրիս մէջ։ Իսկ տեղեկագրի յա-
ւելուածական մասն, ուր քննիչք տարակարծիք գըտ-
նուած են, բոլորովին երկրորդական է, և նոր շին-
ուածոց կամ կալուածոց արդիւնսաւորութեան տուաւել
կամ նուազ լինելուն կը պատկանի, և որոյ մէջ նոյն
իսկ իմ գործոցս վրայ աննպաստ նկատողութիւններ

առողբագրազները, կը կրկնեն հակառակորդացո ա-
ռարկութեանց ապօռէն, անհիմն ու անիրաւ ըլլալը
ու կը գատապարտեն անոնց արարքները։ Մինչդեռ
ի նպաստ ստորագրողք՝ աւելի բացորած կը պարզեն
իմ գործառնութեանց մեծութիւնը։ Ինչ որ զլացած
էին նշանակել տեղեկագրին մէջ, համերաշխութեամբ
ստորագրելու համար ամբողջութիւնը։

Ստկայն բանաձեւ—առաջարկը առանց սոյն տե-
ղեկագիրը նկատողութեան անգամ առնելու, առանց
անոր եղբակացութիւնները ընդունելու կամ մերժե-
լու, նոյն իսկ առանց անոր վրայով որոշ միտք մը
յայտնելու, միմիայն զայն առաջի աշաց ունենալով
բոլորովին տարբեր ուղղութեան մը հետեւած է իր
հայեաց ըին մէջ երթալ յանփելու համար յետագոյ
եղբակացութիւննց։

Ս. — Թէ՝ Ս. Ա. թոռոյ մատակարարական հաշիւնե-
րէն՝ վ'րջին երկու 1903—4 և 1904—5 տարիները
պէտք է ենթարկուին նոր ընտրելի Վանական Տնօ-
րէն Ժողովին քննութեան և այս քննութիւնէն յետոյ
1893էն մինչև 1905 Ապրիլ 30 հաշիւները պէտք է
ներկայացնուին Միար. Ընդհ. Ժադար կատարացման։

Բ. — Թէ՝ Երուսաղէմի Ամեն. Ա. Պատրիարքը,
Պոլսէն դրկուելիք երկու պատուիրակներու ներկայու-
թեամբ, իմ տեսչութեան տուն կատարուած շինու-
թեանց մասին տեղական քննութիւն և ճարտարա-
պետական գնահատում ընելով, վանքին Տնօրէն Ժո-
ղովոյ կարծիքն առնելէ յետոյ անոնց հաշիւներն ան-
ցընել այս վանքին տոմարներուն մէջ։

Բանաձեւը այս որոշումներուն պատճառ տուող
բազմաթիւ նկատողութիւններ մէջ կը բերէ և ի վեր-
ջոյ կը յաւելու թէ «պատասխանատու կը գտնէ գըլ-
խաւորաբար զծէր Ղեւոնդ Վարդապետ Մաքսուտ-

եան՝ իրաց անկերպարան վիճակին՝ շփոթ կացութեան ու անգոնացուցիչ արդեանց»:

Հարկ կը համարիմ ներկայիւս յայտնել խոնարհաբար թէ Պատկ. ժողովուդ անուամբ տրաւած սոյն երկու որոշումները գլխավին կը հակառակին՝ ո՛չ միայն Քննիչ Յանձնամուզի բացորոց եզրակացութեանց, այլ և Ս. Երուսաղէմի խնդրոց նկատմամբ ասկէ առաջ Պոլսոյ Պատրիարքարանին տաւած բոլոր որոշումներուն, բրած բոլոր գիմումներուն և տարած բոլոր աշխատութեանց:

Ա. — Երուսաղէմի և Պոլսոյ Պատրիարքարաններուն միջեւ փոխանակուած պաշտօնագրերէն բացայցտ կ'երեւի որ՝ եթէ Տ. Յարութիւն Ա. Պատրիարքը 1893 թուականէն ասդին ինչ ինչ արգելիչ պատճառներու բերմամբ չը կրցաւ Միաբ. Ընդհ. Ժողով գումարել, ասկայն ես միաբ. կանոնագրին տրամադրութեանց գլխավին համաձայն վարած եմ ելեւմտից Տեսչի պաշտօնու, ամին ամիս մատակարարական հաշվեւները Ա. Պատրիարքին ու Տնօրէն ժողովոյն մատուցանելով, որոց վաւերացումը թէ հաշուոց ներքեւ և թէ Տնօր. Ժողովոյ ատենագրութեանց մէջ բացորոց կը տեսնուի: Իսկ ամին տարեգլխի ամբողջ տարւոյ հաշիւները ներկայացուած են նոյն ժողովոյն որ յետ քննութեան Ամին Ա. Պատրիարքին հետ համախորհուրդ վաւերացուցած է զանոնք: Այս հաշիւներուն այս տեղ քննուիլը անհրաժեշտ նկատուեցաւ և այս մասին մինչեւ խոկ Կայս. Բարեխնամ կառավարութեան դիմում եղաւ և սակայն հիմայ որ քընութիւնք հաստատեցին իմ անպարտութիւնս, նոյն որոշումն ալ ետ կ'առնուի:

Իրեւ լուսաբանութիւն բանաձեւին առ այս ըրած նկատողութեանց, հարկ կը համարիմ յիշել թէ

1. — 1903—4 և 1904—5 մինչեւ Յունվարի կէսը ընթացող հաշուեցոյցերուն Տնօ. Ժողովոյ կողմէն չը կարենալ վաւերացուելուն պատճառները ծանօթ են Պատկ. Ժողովոյդ, զի միաբաններէն ոմանք ո՛չ թէ հաշուեցահաննութեան գովելի նախանձախնդրութեամբ, այլ պարզապէս հակառակութեամբ և շահախնդրութեամբ իմդիր համեցին: Որ ծագում առաւ իմ պաշտօնէս բոլորովին գուրս 1903ի Բարեկենդանէն կոփամարտով մը և իրենց անվայել արարքով չը պաշտպանելուս համար՝ Կրիլիկոյ նորվնտիր Ամին. Ս. Սահակ Ա. Կաթողիկոսն ու զիս ամբաստանեցին իրեւ գրգուող խոսվութեանց, և հետզհետէ միամիտներէ համախոններ պատրաստելով՝ ընդվզեցան վանական իշխանութեան գէմ, խոսվութեամբ լեցուցին վանքը, անարգեցին զՏ. Յարութիւն Պատրիարք և միաբաննութեան ծերունի եպիսկոպոսները, ատնակոխը ըրին միաբանական օրէնքը, մերժեցին Միաբ. Ընդհ. Ժողովը որինուառը քուէն, անսաստեցին նոյն խոկ կեզր. Վարչութեանդ. այնպէս որ Զեր Բ. Ալբրետնութիւնը իր մէկ պաշտօնագրով (25 Մարտ 1903 թուագրեալ) կը ձանաչէ զանոնք և կ'որակէ իրեւ «յանդգնալեզու, յանձնապաստան, կրքէ մղուած, տըգեղ ու անվայել գործոց հեղինակ, նենգտմիտ, իրուզութիւններ խեղաթիւրող, անլուր յանդգնութեամբ բռնարարութիւն գործող, Ազգ. կեզր. Վարչութեան անարգու, ամենաբարձր աստիճան ունեցող և կայս. բարեխնամ կառավարութիւնէն գեր ի վեր պատուեալ եկեղեկացան մը (Տ. Սահակ Կաթողիկոսը) նախատող և անտեղի ու անպատշաճ ընթացքով զՏ. Յարութիւն Ա. Պատրիարքն յանիրաւի ամբաստանող» են ասկդիրներով: Այս հռչակաւոր գրութիւնէն յետոյ էր որ հաշուոց խնդիր մէջ տեղ ձգուեցաւ, և մի

կողմէն զիս ամբաստանեցին իրրեւ հաշուեխոսոս ու գեղածանող ահազգին գումարներու և միւս կողմէն Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը լրագրական հրապարակին վրայ զրապարտեցին՝ թանկագին Աւետարանի մը անգոյ խնդրով։ Ու այսպէս հետզհետէ ընդլայնեցին ու տարածեցին իրենց զրապարտութիւններն ու մուրերը միաբանութեան ամենէն կարեւոր անդամոց վրայ, որոնք չէին ընդունած համակերպիւ իրենց շահախնդիր ձեռնարկներուն։ Ահա այս միաբանք ո՛չ պատրիարքական իշխանութիւն թողուցին, ո՛չ Տնօրէն ժողովոյ գործելու ազատութիւն և ո՛չ ալ ինձ կարեւմ ըրեն օրինաւորապէս ղեկավարել ինձ յանձնեալ տեսչութիւնը, անանկ որ 1903 Դեկտ. Ֆին բոլորովին ըմբոստանալով Տնօ. Ժողովին գէմ, անկէ վերջ ուղղակի Պատրիարքական անօրէնութեամբ եղած են գործերը և վճարումները և հետեւաբար այս եղանակաւ կատարուած իրողութեանց մէջ բնաւ մասնակցութիւն չ'ունիմ և ոչ պատասխանատուութիւն։ Այս ամեն եղելութիւնք ժամանակին արդէն գրուած ու տեղեկադրուած են Ազգ. Պատրիարքարանին թէ՛ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի և թէ՛ միաբանութեան լուրջ մեծամասնութեան պաշտօնագրերով ու հանրագրերով, ո՞ք սակայն բոլորովին մոռացութեան տրուած կամ անտես առնուած են։

2. — Ըստ միաբանական կանոնագրի (յօդ. 32) Տնօ. Ժողովը իր ժամանակի գործառնութիւնները քննելու պաշտօնն ունի և անոնց մասին ինքն իրեւ համարտու կը ներկայանայ Միաբ. Ընդհ. Ժողովին, մինչդեռ 1903—4 և 1904—5 տարիներու գործառնութիւններն ու հաշիւնները ներկայիս չեն վերաբերի այլ նախորդին, որոյ անդամոց մեծ մասը վախճանած են, և ըստ օրինի չը կրնար անոնց քննիչն ու

համարասուն ըլլալ։ Հետեւաբար քննութիւնք կը կատարուին բացառիկ կերպով, ինչ որ Կեդր. Վարչութիւնը ինքն խակ որոշեց կատարել և կատարեց։ սակայն այժմ այս որոշումն ալ ես կ'առնուի։

3. — Դիտու արժան է որ երբ ես 1903ին խնդրած էի Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին Միաբ. Ընդհ. ժողով գումարելով նախ հաշիւններու խնդիրը վերջացնել և ապա լուսարարապետի ընտրութիւն ընել, այժմու հաշուեպահանջ կոչուող միաբանները ընդգիւմացան և յաջողեցան զՊատրիարքն համոզել յետաձգելու հաշուոց վաւերացման գործը իրեւ անկարեւոր ու անմիջապէս լուսարարապետի ընտրութիւնը կատարել, յորում կը յուսազին համախաններէն մէկը կոչել այդ պաշտօնին և այդու իրենց նապատակը իրագործել, սակայն մեծամասնութեան քուէն իրենց հակառակ ելաւ, և այս անյաջողութեան հետեւանքն եղաւ հաշուոց խնդիրը արծարծել, ինձ գէմ ուղղելով իրենց յարձակումները, առանց նկատողութեան առնելու թէ ես իմ ելեւմակց Տեսչի պաշտօնիս մէջ Ս. Պատրիարքին և Տնօ. Ժողովին պատասխանատու էի և այդ պարտականութիւնը արգէն կատարած էի՝ ժամանակին ներկայացնելով վանական բոլոր հաշիւնները։ Խսկ Կեդր. Վարչութիւնը, որ ի սկզբան անհամամիտ էր հակառակորդներուս, որ տակաւ մոռցաւ նախընթաց խոռվութիւնները, իր յանդիմանական գրերն ու հեռագրերը և լուսարարապետի խնդիրը, ու կարծեց թէ՝ հաշուէ խոյս կուտամ, թէ՝ Պոլիս գալ չ'ուզէր, մինչդեռ հակառակ իմ փափաքանաց Տ. Յարութիւն Սրբազն Պատրիարքն էր որ կը մերժէր։ Ինչ որ իր պատճառներով գրեց պատկ, վարչութեան 1903 Օգոստոս 28 նոմակաւ։ Դժբաղդաբար Կեդր. Վարչութիւնը

օր ըստ օրէ հակառակ՝ ըդացս աղմուկներէն ազգուելով յառաջ գնաց մինչեւ բարեխնամ կառավարութեան առջեւ ամբաստանել զիս իբր անսաստող Պատրիարքական իշխանութեան ու կայս. իբրատէ անգամ ստացաւ զիս բերել տալու, որպէս զի հաշիւները հոս քննուին: Բայց հիմա այս ամէնը մոռացութեան տըրուած են, մինչեւ անշուշտ բարեխնամ կառավարութիւնն ալ կըսպասէր այս քննութեանց վախճանին, քանի որ ինքն իսկ հրամայած էր որ հաշիւներն այս տեղ քննուին ու վերջ տրուի անոնց առթիւ յարուցեալ խնդիրներուն:

4. — Հաշուեպահանջ կարծուածներու խնդիրը նախ մատակարարութեան 10ամեսոյ հաշուոց մասին էր, և ի վերջոյ երբ անոնց մէջ աեսնուեցաւ իմ անպատասխանատուութիւնս ու կանոնաւորութիւնս, մէջտեղ հանեցին նոր շինութեանց հաշուի խնդիրը, որ թէեւ Տնօրէն ժողովոյ որոշմամբ և Պատրիարքի հաւանութեամբ ուղղակի իմ պատասխանատուութեանս ներքեւ՝ վանքի հաշուոց հետ չը խառնելու և չը շրփելու պայմանուած ինձ յանձնուած էր, սակայն ամեն ատեն նոր շէնք մը ամբողջանալուն՝ անոնց հաշիւը ներկայցուած է ժամանակին Տնօրէն ժողովոյն և գոհունակութեամբ լնդունուած, ինչ որ կը հաստատեն արձանագրութիւնք. անանկ որ, միայն վերջին մէկ երկու մասնաւոր շինուածոց և կալուածական առկախ գործողութեանց շարունակելի, հաշիւներն էր որ կը մնային, սպասելով ամբողջացման, և որոց գումարը հազիւ 4—5000 ոսկեոյ կը յանդի. ասոնց հաշիւն ալ, մանաւանդ արդիւնքը կար որ կը մնար, և 1903ի վերջերը պիտի փակուէր ու ներկայցուէր: Արդ այս ամեն հաշիւ ու խծրծանք այստեղ մանրակրկիտ քննութեան ենթարկուեցան Պատկ.

Ժողովոյդ մէջ տթոու ունեցող վստահելի և նոյն իսկ հակակիր անձնաւորութեանց միջոցաւ: Եթէ ժողովդ անոնց խիստ քննութեան արգեանց վրայ համոզում գոյացուց, այլս ո՞նչ հարկ կար նոր քննութեան կամ վաւերացումի համար զանոնք յերուսաղէմ վերագարձնելու, իսկ եթէ ինքզինքն առ այժմ անձեռնեաս համարեց այդ քննութեանց և հետեւաբար զգուշացաւ համոզում գոյացնելէ, այն ատեն անբացատրելի կը մնան բանաձեւ—որոշումին մէջ նշանակուած խել մը նկատողութիւնները որոցմով կը քննադատուին շատ մը գործաւնութիւններ, որպիսիք են, 1. — Աղեքսանդրիոյ գետինին հապճէպ վաճառումը և այդ առթիւ տեղի ունեցած ծախքը. 2. — Տոկ պարտքի քանակը. 3. — Ելմացոյցի կարծեցեալ անգոյութեան հետեւանօք անկանոնութեանց գործուած լինելը. 4. — Վանքին հին ու նոր պարտքերու վճարման համար ձեռք առնուած միջոցները. 5. — Նոր շինութեանց օրինաւոր հաշուեցոյցերու պակասութիւնը. և այս ամենուն մէջ գլխաւոր պատասխանատու զիս համարելը:

Այս նկատողութեանց ի պատասխանի կը յայտնեմ թէ՝ Աղեքսանդրիոյ գետինը ո՛չ թէ հապճեպ ու գաղտագողի, այլ բազմամեաց քննութիւններէ ու հետապնդումներէ յետոյ՝ երկար խորհրդակցութիւններով ու բանակցութեամբ, յայտնի ու որոշ սակարկութիւններով և օրինաւոր գործողութեամբ կատարուած է, որ ունի իր յատուկ արձանագրութիւնը. վաճառման հրամանները, փոխանորդագիրը, արտօնագիրը Ս. Պատրիարքէն տրուած են Տ. Վահրամ Վարդապետին և ո՛չ ինձմէ: իսկ վաճառման ծախքը իբր 1800 ոսկի ներկայացնելը բոլորովին սխալ է, բաւական էր հարեւանցի ակնարկ մը նետել նոյն

գուշաբին մանրամասնութեանց վրայ՝ մտքերը շփոթեցնալ այդպիսի յայտարարութիւն մ'ընելէ առաջ և պիտի տեսնուէր թէ գօմիսիօն և վաճառման ծախքը միայն 748 ոսկի է և ոչ աւելի։ Գալով վաճառման արժէքին և յարակից նկատողութեանց, պէտք է գիտնալ թէ նոյն գետնին կից տեղւոյն եկեղեցւոյն պատկանեալ կալուածն ալ տեղւոյն պաշտօնական մարմնոց կողմանէ միեւնոյն ժամանակ միեւնոյն գնով ու պայմաններով միեւնոյն ընկերութեան վաճառուած է։ Նոյն գետնի վաճառման մասին եղած միաբանական խծբանքները վաճառումէն երեքուկէս տարի վերջը սկսան Տ. Վահրամ Վարդապետի լուսարարակետ ընտրուելէն յետոյ և այդ առթիւ, որ տեսն գետիններու արժէքներն ալ սկսած էին բարձրանալ յԱղեքսանդրիս։ Իսկ միւս նկատողութիւնք ցոյց կուտան թէ խնդիրն ըստ արժանուոյն լուսաբանուած չ'է Պատկ. Ժողովայդ, զի տոկոսաւոր պարտուց քսնակը հաստատուած է Ս. Պատրիարքավ ու Տնօ. Ժողովով. վանքը միշտ իւր ելմտացոյցը ունեցած է, առանց որոյ մտակարարական վարչութիւն արդէն անկարելի կ'ըլլայ։ Նոր շինութիւններէն գրեթէ պարտք մը չ'է մնացած վանքին և վերջապէս անոնց հաշիւներն ալ քաղուած են ո՛չ թէ ցիր ու ցան թղթերէ, ալլ վանական պաշտօնէից ձեռքով բռնուած հաշուետերերէ, որք ժամանակին արդէն ներկայացուած էին Տնօ. Ժողովին և զորս ներկայացուցած եմ նաեւ Քննիչ Յանձնաժողովին, պատրաստելով ու կազմելով հետզհետէ յատուկ հաշուեցոցեր, ցուցակներ ու ընդարձակ բացատրութիւններ՝ ըստ պահանջման պատուարժան յանձնաժողովին ի գիւրութիւն։ Հարկ կը համարիմ ըսել նաեւ թէ՝ այս շինութեանց մէջ դրամական ամեն գործառու-

թիւնք, գնմունք ու վճարմունք նոյն պաշտօնէից ձեռքով եղած են և ես միայն վերին հսկող, կարգադրող և գրամմի հայթալթիչ գտնուած եմ։ Ուրեմն բանաձեւ—որոշումն այս սխալ նկատողութիւնները չեն կրնար հիմ կազմել իմ հաշուական գործառնութիւններու քննագատելու և զիս դատապարտելու, որ ո՛չ մի օրէնքով ներելի կրնայ ըլլալ, երբ մանաւանդ Պատ. Ժողովի ինքզինքն անձեռնհաս ևս գլունելով՝ այս անգամ ալ հաշուոց ու գործառնութեանց քննութիւնն ուրիշի կը յանձնարարի։

5 — Գալով այն նկատողութեանց որ հիմնուած կը ցուցուին Միհար. Կանոնագրին 31էն 34 և 50, 51, 8 յօդուածներուն վրայ, անոնք արդէն սկզբամբ ի գործադրութեան եղած են, զի ամեն կարեւոր եւ լեւմուաթք, շինութիւնք, փախառութիւնք Տնօրէն Ժողովով և Ս. Պատրիարքի հրամանաւ կատարուած են։ Իսկ իմ պաշտօնավարութիւնս 25 տարի իրեւ անգամ կամ տաենապետ Տնօր. Ժողովոյ և Տեսուչ Ելեւմտից՝ ոչ թէ իմ կամքով ու յօժարութեամբ այլ Ս. Պատրիարքի որոշ հրամաններով և Միհարանական Ժողովոց քուէներով ու անդիմագրելի թախանձանքներով եղած է, ամեն անգամ վերընարուելով և ո՛չ թէ անընդհատ շարունակելով և այս զանցառութիւն ոչ միայն իմ պաշտօնիս այլ ուրիշ պաշտօնէից, մասնաւանդ կարեւոր պատասխանատուութիւն ունեցող պաշտօնէից նկատմամբ ալ տեղի ունեցած է, որուն պատճառը յատկապէս արձանագրուած է Տնօր. Ժողովոյ արձանագրութեանց մէջ նոյն կանոնագրի ի գործադրութեան գրուելու պահուն իսկ, երբ փորձառար հարկ տեսնուած է չեղումընել անկարեւոր արամագրութիւնէն, և որուն պատասխանատուութիւնը նոյն ինքն Տ. Յարութիւն Ս. Պատրիարքն

ինքն ստանձնած է իր Գահակալ Ա. Աթոռոյն, պետ Միաբանութեան և պատասխանատու առաջի Ազգին և Կայս. բարեխնամ կառավարութեան։ Թէև միւս կողմէն միեւնոյն կանոնագրի տարրեր յօդուածոց մէջ (յօդ. 28, 40) համարատու անդամներ նշանակած է Տնօր. Ժողովին մէջ, և (յօդ. 53) Ելեւմտից Տեսչի ներկայութիւնն անհրաժեշտ դատած է ի խորհրդակցութիւն՝ Տնօր. Ժողովոյ մէջ լինելիք ամեն ելմտական անօրէնութեանց ու հաշուական գործառնութիւնց, և այս՝ շատ բանաւոր պատճառաւ, որովհետեւ անհրաժեշտ է, որ Տնօրէն Ժողովը ելմտական որ և է տուրինութիւն մը ըրած ժամանակ կատարելապէս տեղեակ ըլլայ վանուց ելեւմտական վիճակին։ Բաց յայնմանէ Ելեւմտից Տեսուչն, ինչպէս կը կարծուի, ծախքի և հասայթի որ և է ժամանաւոր գործառնութիւն և հետեւաբար ուզգակի պատասխանատութիւն յառաջ բերող գործ մը չունի, այլ իր պաշտօնը ընդհանուր վերահսկողութիւն մէ և միայն բոլոր պաշտօնէից հաշիւները կը ստունայ Ա. Պատրիարքին միջոցաւ, իւր հաշուակալին հետ կը բաղդատէ, կը քննէ դոնոնք ու ժողովին կը ներկայացնէ և ապատօնաներուն մէջ անցընել կուտայ. գանձումներն ու վճարումները պաշտօնէից ներկայացուցած հաշուեցցներուն կամ հաշուետերներուն վրայ կը կատարէ հրամանաւ Ա. Պատրիարքին կամ որոշմամբ Տնօրէն Ժողովին և սնտուկի հաշիւը կը գրուի հաշուակալին ձեռօք ու տառէ ամիս կամ պարբերաբար մանրամանօրէն կը քննուի Տնօրէն Ժողովին մէջ ու կը բաղդատուի ստացագրոց և պատկանեալ հաշուոց հետ և այնուհետեւ կը վաւերացաւի։ Միեւնոյն եղանակաւ կը քննուին տոկոսաւոր փրխառութեանց բոլոր գործառնութիւններն, որք իրենց յատուկ արձանագրու-

թեան տեսրակն առնին և արդէն ամեն գործողութիւն Ա. Պատրիարքին և Ելեւմտից Տեսչին փախադարձ ստորագրութիւնները կը կրէ իր միմեանց հակակշիռ կամ գօնթրոլ։ Ահա այսպէս կրկնակ հակակշիռներով կատարուած են իմ ձեռքով եղած ամեն գործ և հաշիւ։

Հրատարակեալ բանաձել քննագտառելով իմ պաշտօնագարութիւնն՝ Գորացեալ 32,627 Օոմ. ոսկեոյ պարտուց պատճառ կը ցուցնէ յուի մատակարարութիւնն, և այս ամենը կ'ընէ առանց մանրամանօրէն քննելու, և առանց Քննէջ Յանձնաժողովէն կամ գոնէ ինձմէ հարկ եղած բացատրութիւնները ուղելու. որով կը յանգի այնպիսի եղբակացութեան մը, որ երբեք չհամապատասխաններ իրաց վիճակին։ Որովհետեւ Կ'ենթագրէ թէ 12 տարուան միջոցին արժեկթուղթերու և կալուածոց վաճառումներէ և բացափի նուիրատուութիւններէ գոյացած մեծաքանակ գումարներ առնուելէ ու գործածուելէ յետոյ, տակաւին 190օ Ապրիլ 30ին վանքը 32,627 Օոմ. ոսկեոյ մնացորդ պարաք մը ունի, որուն 14,034 Օոմ. ոսկին տոկոսաւոր, մինչգեռ իրական պարտքը միայն վերջին 14,034 Օոմ. ոսկին է, իսկ յիշեալ 32,627 Օոմ. ոսկեոյ գումարէն մնացորդ 18,593 օսկին պարզապէս տոմարական գործողութեանց, այն է, պարտական և պահանջող հաշիւներու տարբերութիւնն է, զոր կը կազմեն նոյն իսկ արժեթիթերու և կալուածոց վաճառումներէ և բացափիկ նուիրատուութիւններէ գոյացած գումարները. հետեւաբար անտեղի էր մոքերը ահաբեկել այդպիսի սիալ առարկութեամբ։ Զոկ. Պարտուց 14,034 Օոմ. ոսկեոյ գումարին ալ ես պատասխանատու չեմ, վասն զի Ելեւմտից Տեսչութեան պաշտօնս թողած ժամանակս, 190օ Յունուար 13ին,

տոկ.. պարտքը 12,603 տոկի էր միայն, մինչև Ապրիլ
30 տեղի ք չկար նոր պարտք աւելցնելու, այլ ընդ-
հակառակն պէտք էր պահպահութել, որովհետեւ այդ
միջոցին կը գանձուին ուխտաւորսկան և կալուածա-
կան գիշաւոր հաղպահները. որոնց հետ խառնած են
նաև նոր շինութեանց վերաբերեալ եկամուտները,
որք առոնց պարտքին յատկացուած էին բացարձա-
կապէս. Բաց յայսցանէ 1900էն վերջը, երբ տոկ.
պարտքերը վճարուած էին, նոր տոկ. պարտուց գո-
յացման դիմուգրած էի և բողոքներո կրկնոծ, ինձ
ձայնակից եղած էր Տնօրէն ժողովն ալ, ուկայն այս
գիմադութեամբս, բողոքներովս և խնայողութեան
ու ելմտացոյցի պահպանութեան համոր ըրած ձեռ-
նարկներովս էր, որ թշնամութեանց առարկայ եղայ :
3. — Կալուածական նոր շինութեանց հաշուէն գո-
յացած շուրջ 10,000 սոկոյ պարտքը քննադատելի
հանգամանք մը չունի բնաւ. վասն զի բաց պարտք
մը չէ, և մինչև 1903 Դեկտ. պիտի վճարուէր, եթէ
իրաց վիճակը չը փոխուէր և ամեն բան հակառա-
կորդներուութշնամութեանց չը գոհուէր : Նոյն գու-
մարէն միայն 5556 սոկին էր նոր շինութեանց
մնացորդ պարտքը, որուն դէմ 1903ին գանձելի կոն-
խիկ և ապառիկ վարձքերու 5701 սոկիի գումար
մը կար: Խոկ մնացեալ 4500 սոկոյ մօտ գումարին
փոխարէն 4700 սոկոյ նոր գնեալ կալուածներ կան
որոց գումարը պիտի կրնար վճարուիլ մեծ արտէն
վաճառելի մասի մը փոխարժէքով, որ խափանուե-
ցաւ սակայն ներքին շինութեանց պատճառաւ :
Այսու ամենայնիւ նոյն խոկ նոր շինութեանց երկու
տարւոյ եկամուտներով ալ կարելի պիտի ըլլար հա-
տուցանել զայն, այնպէս որ ներկայ 1906 տարւոյն
վերջը այլ ևս այդ հաշուէն բնաւ պարտք չը պիտի

մնար. և յաջորդ տարիէն սկսակալ նոր շինութեանց
պատկանեալ 2300 ոոկիի տարեկան եկամուտէն կեն-
դանի միաբանից բաժինը հանելով մնացորդ 2000 ոո-
կիի տարեկան նոր եկամուտ մը պիտի մտցուէր վա-
նուց ընդհանուր մատակարարութեան ելմտացոյցին
մէջ :

Բանաձեւը՝ իմ վայելած 25 ամեսոյ անուհան
վատահութիւնը յիշելով՝ կ'ակնկալէ ինձմէ նախանձա-
խնդրութիւն համարատուութեան կանոնաց անթերի
գործադրութեան յօրինակ այլոց և յօգուտ Ս. Աթո-
ռոյ: Այս մասին ունեցած ակնկալութիւնը որչափ որ
պատիւ կը բերէ ինձ. այնու ամենայնիւ առիթ մը
չէր կրնար ընծայել իրենց զիս գատապարեկու, ա-
ռանց մեր ներքին վիճակն ու գործոց ընթացքը առ
ուսումնասիրեկու: Ես կրնամի վստահացնիլ ու հաստա-
տել թէ ես չեմ պատախանատու իրաց այդ վիճա-
կին, ես իմ պարտաւորութենէս աւելին կատարած
եմ, ամբողջ ժամանակս, կեանքս, ասպարէզս զոհած
եմ Ս. Աթոռոյ շահերը պաշտպանեկու, անցելոյն գոր-
ծերը մաքրելու, ներկայն բարեկարգելու և ապագան
պատահովելու, և գոհ եմ որ նապարդիւն չմնացին ջան-
քերս, և եթէ 1903ին ներքին խուվութիւնները
սահմանափակուէին, ինչպէս կը փափագէր նայն ինքն
Տ. Յարութիւն Պատրիարք, այսօր երուսաղէմի Ս.
Աթոռը անհամեմատ բարձրութեան և յաջողութեան
մէջ պիտի գտնուէր: Անուրանալի է թէ ներկայ ել-
մտական և տոմարական գրութեան հիմնադիրն ու
գործադրիչը ես ինքս եղած եմ, հակառակ անթիւ
դժուարութեանց: Քննիչ Յանձնաժողովը իւր քննոյ-
թեամբ հանողուեցաւ այս ամենուն և իր տեղեկա-
գրով վկայեց: Եթէ իմ ելմուական կանոնաւոր ուղղու-
թիւնս, անվհատ յորուա՛ռու թիւնու և ի գործ դրած

միջոցներս չըլլային, տուկոսաւոր պարտքը միծ համեմտութիւններ պիտի ստանար, այնպէս որ Աղեքոսանդրիոց կալուածին վաճառմամաբ տլ չպիտի կրնար վճարուիլ, ընդ ամենը շն ամենայ պաշտօնավարութեանս միջոցին տուեալ հաշիւք, կանգուն չէնքերը և գտնուած արձանագրութիւնք և տոմարք ցոյց կու տան թէ՝ Ս. Աթոռոյ յԵրուսաղէմ և ի Յոպաէ 1880ին ունեցած կալուածները այսօր միայն տարեկան 1500 ուկոյ հասոցթ պիտի տողին, մինչդեռ 1905 թուականին մինչեւ 6000 ոսկեոց րուրծրացած են, ինչ որ մանրամասն ցուցակներով և տեսրակներով ներկայացուցած են Քննիչ Յանձնաժողովին, բոյց այս աշմենը բնաւ նկատողութեան տանաւած չեն Պատկ. Ժաղովոյդ Կողմանէ:

Այս բանաձեւ՝ իրաց անկերպարան վիճակին, շփոթ կացութեան և անգուհոցուցիչ արդեանց յանիրաւի զիս գլխաւոր պատասխանատու ցոյց տալէ յետոյ, գիտնալով որ այժմ օրինական մեծամասնութիւնը կազմողներն հալածուած և ցրուած են, իսկ սակաւաթիւ հակառակորդներս ապօքէն միջոցներով ստուարացած մեծամասնութիւն կը կազմեն, այն տեղ կը զրկէ իւր կատարած քննութեանց արդեւնքը տեսակ մը վերաքննութեան կամ վաւերացման հնթարկելու կամ աւելի ճիշդ վերջնական վճիռը իմ հակառակորդներու դատաստանին կը յանձնէ. ինչ օրէնքով արդեօք, և ինչո՞ւ ուրեմն այս երկամեայ աշխատութիւններն ու ծգծգութեները ի զուր զբաղեցուցին այս տեղ Պատկ. Վարչութիւնդ ալ, Քննիչ Յանձնաժողովն ալ, զիս ալ և պարտպ տեղ ժամավաճառ ըրին: Կը յիշէ անշուշտ Պատ, Վարչութիւնդ որ հաշուական խնդրոյն մասին արդէն ինձ գէմ եղած ամեն տեսակ գրութիւն, հաշիւ և սմբաստանութիւն պատ-

րաստ ունինալով հանդերձ, իմ գալէս վերջը պէտք տեսած էր նոր և մանրակրկիտ հարցարանով մը Տ. Յարութիւն Ս. Պատրիարքէն մանրամասն տեղեկութիւններ պարունակող ընդարձակ տեղեկագիր—տամար մը դրկուած էր: Այսուհեաւ այդքանով ալ չբաւականալով յատուկ մարդ զբուած էր զեղծումները մատնանիլ ընելու համար: Նրկուած անձը, որ արդէն ժամանակին հաշուակալ եղած էր, ներկայ հաշուակալին հետ ամեն տոմար քննած ու ինձ գէմ եղած բալոր փատտերը պանորաստ ունէր ի ձեւին, զսրս առիթ ունեցաւ պարզելու Քննիւի Յանձնաժողովին. իմ տուած բոլոր հաշիւներս անոր տրամադրութեան տակ գրուեցան, որ օրինակեց զանոնք, Երասաղէմ զրկեց, գիտողութիւններ և տեղեկութիւններ ստացաւ, հս ալ քննեց և քննել տուած և իր գիտողութիւնները ներկայեց Քննիչ Յանձնաժողովին յանուն Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի: Այս ամենը կատարուելէն վերջը այլ ևս մը պիտի գիտողութիւնց պիտի ենթարկուին արդեօք և ինչ բաղդատական կամ տեղական քննութեանց բովէն պիտի անցնին: Արդարէ ոչ մի քննութենէ կամ հաշուէ իսպս տուած չեմ և չեմ տար. բայց միայն պէտք է որ անոնք արդարութեան օրինաց պայմանին մէջ կատարուին: Մինչդեռ բանաձեւին մէջ առաջարկուած միջոցը ոչ մէկ բանաւոր և արդար պատճառ մ'ունի, որովհետեւ սխալ է այն առարկութիւնը թէ ցան և ցիր թղթերու վրայ կազմուած է հաշիւք, որք կանոնաւոր հաշուեցոյցներ են. իսկ բուն ծախքերը եղած են պաշտօնէից ձեռօք, որոց ներկայացուցած հաշուետետրներու վրայ ըրած եմ վճարումները, ինչպէս կ'ըլլայ մատակարարութեան բոլոր հաշուց համար, և այդ ամենը ներկայացու-

ցած եմ Տնօրէն Փողովին՝ շինուածանիւթոց հայթայժիշներու հաշուեցոյցներու հետ, որ պահուած կը մնան։ Նոյն հաշուետեարները ցոյց տուած եմ նաև Քննիչ Յանձնաժողովին։ Եթէ տարիներով առաջ քննուած և ընդունուած հաշիւները վերստին քննել ձեռնարկուի, այն ատեն հարկ կ'ըլլայ նախ վերաքննել բոլոր պաշտօնէից հաշիւները, և անոնցմէ ստացագրեր պահանջել ամեն բանի համար, և նոր քննութիւններ կատարել իրենց ձեռօք եղած շինութեանց և նորոգութեանց համար։ Բանաձեւը կը շփոթէ նաև իմ գերա նոր շինութեանց հաշիւններուն մէջ, ուր վերին հոկողն ու համարատուն էի և ոչ թէ համարատուն, և այդ եղանակու ստացած եմ անոնց հաշիւնները ու վճարած, այժմ ամբնական է անոնցմէ նոր ստացագրեր պահանջել և ներկայացնել։ Իսկ ճարտարապետական քննութիւն կատարելու իրաւունք ունենալու համար, պէտք էր որ նոր շինութիւնները կանխաւ որոշեալ և ճշգեալ պայմանուգրով և կանխիկ դրամով, այսինքն կապալով ինձ արուած ըլլային։ բայց այդ պարագային ալ պէտք կ'ըլլար շէնքը որոշեալ պայմանաժամկին աւարտելով յանձնած ժամանակս կատարուէր այդ քննութիւնը, և ոչ թէ 7—10—15 տարիներ վերջը, երբ արգէն ժամանակին հաշիւնները քննուած և ընդունուած էին։

Այնու ամենայնիւ 1904ին ընդհ. տեղեկագիր մը պատրաստել ձեռնարկած ժամանակս՝ փափառքելով գիտաւութիւն ինչ կարծէր մեծ օթէլի ամբողջ շէնքը, փորձառու ճարտարապետի մը յանձնարարած էի մանրամասն քննութեամբ զնահատութիւն մ'ընել առանց յայտնելու իրեն թէ քանի՛ով ելած էր այն։ Ճարտարապետին ներկայացուցած զնահատական մանրամասն հաշւոյն համագումարը 539,981 ֆրանգի կը

յանգէր, մինչդեռ շինութեան բուն ծախքը 400,000 ֆրանգէն ալ շատ պակաս եղած էր։ թէև կառուցուած ժամանակ 100,000 ֆրանգի կը գնահատուէր քաղաքին մէջ։ Այս զնահատական տեղեկագիրը նոյն շէնքին համար իմ պատրաստած ընդարձակ տեղեկագրիս հետ ներկայացուցած էի Քննիչ Յանձնաժողովին, որ զանոնք ալ տեսնելէ յետոյ իր զնահատակարդին ըրտւ շինութեանց տարածութեան վրայ կանգաւնի հաշուով ու զոհացուցիչ գտաւ։ Գալով նոր շինութեանց շահարերութեան խնդրայն, անոնք ոչ թէ միայն 4—5% շահ կ'արտագրեն, ինչպէս կը կարծուի, այս 7½ % միջին շահ մը կ'ապահավին, որուն սանրատանանութեանց ցուցաիները արգէն առած եմ Քննիչ և Ատենապետաց Յանձնաժողովիներուն։

Ներսի ինձ լիւել նուեւ որ Քննիչ Յանձնաժողովի տեղեկագիրը բաժնուեցաւ բոլոր ժողովականաց, որպէս զի նոխառէր ուսումնականիրեն եւ իրենց կարծիքը հաղորդեն, սակայն առանց այդ կարծիքները հաւաքելու, նոյն իսկ առանց կարեւորութիւն առլու կրօն։ Ժողովայ տաենապետ Տ. Մեսրոպ Ա. Ալքեպիսկոպոսի գրաւոր յայտարարութեան, որով յայտնած էր իւր կարծիքը ինպաստ տեղեկագրի եզրակացութեանց, յանկարծ այս բանաձեւը մէջ կը բերուի եւ կ'արժանանայ Փողովոյդ հաւանութեան։

Եթէ միայն անձիս խնդիրը ըլլար, թերեւս լուէի ինչպէս ցարդ լուեցի բայց տռաւելապէս կայ Ս. Աթոռոյ եւ ընդհ. միաբանութեան շահը. անմեղ միաբաններ կան որ իմ անունով չարչարուած, կալածուած են։ Երկու տարուան մէջ վանքը տասը հազար ոսկիէն աւելի նոր պարտք գոյացուցեւ այս ընթացքով անկարելի չէ որ քիչ ատենէն անհնարին համեմատութեան մը հասնի այն։ Սակայն այս ամենը ան-

տես կ'առնուշին բանաձեւին մէջ և ամէն անկարգութիւն հաշուական պատրուակին տակ սքօղած, անոնց հեղինակները արդարացնել կը փորձուի ։ Հիմակ ալ անոնք են որ իբր առնեն իրաւանց տէր կը նկատուին, իսկ բազմանայ աշխատաւոր միաբաններ կը մերժուին ու կը հալածաւին. անցեալն ամբողջ կը դատապարտուի յանձին Ղեւոնդ վարդապետ Մաքուտեանի, իբր թէ պոկէ տռաջ ե՛ս միայն եղած ըլլայի միաբանութիւն, Տնօրէն ժողով, Պատրիարք վերջապէս բացարձակ իշխան, եւ միւսները ինձ կոյր գործիքներ. յանուննեւ ի պատիւ միաբանութեան եւ իր Ամին. Նախագահին կը մերժեմ այդպիսի գաղափար: Բոսնիւ հինգ տարի անսահման վստահութիւն վայելել ո՛չ միայն Պատրիարքներէն, այլ եւ Տնօ. Ժողովներէն (որոց անդամակցուծ են Տ. Սահակ Ս. Կոթողիկոսի եւ հանգուցեալ Խոսհակ, Ներսէս, Երէմիս, Աստուածատուր եւ Մամբրէ Արքեպիսկոպոսներուն նման փորձառու եւ բանդէտ անձնաւորութիւններ) եւ ամբողջ միաբանութենէն, արդարեւ վայրապար չէր կրնար ըլլալ: Բանաձեւը ամբողջ ինքնին իրեն կը հակասէ. զի եթէ կար յերաւադէմ Պատրիարք և ժողով, ուրեմն անիրաւ է լին վերագրել ամին պատասխանառութիւն. իսկ եթէ ոչ, անտեղի են ուրեմն վերջին եղրակացութիւնները, ուրագք խնդիրը նորէն կը վերադարձուի Ս. Պատրիարքին Միաբանական ժողովոյ դատաստանին:

Կուգամ ուրեմն խնդրելու Պատկ. վարչութենէդ, որ հաճի սնդամ մ'եւս նկատողութեան առնոււլ նոյն բանաձեւը, բազդատել զայն Քննիչ Յանձնաժողովի տեղեկագրին և Պատրիարքարանի դիւանատան մէջ գիզուած բազմաթիւ գրութեանց հետ, որով ակն յայտնի պիտի տեսնուին այս խնդրոց ընթացքին մէջ

տիրող հակասութիւնները, որք կը յանգին այնքան անձիշդ եզրակացութեանց: Մինչդեռ իս պատրաստ եմ առաջի աշխարհի ապացուցանել թէ՝ քառասնամեաց միաբանակցութեանս միջոցին ամեն անձնութիւնները բոլոր բազմահոգ խնդիրներուն մէջ աշխատութիւնց և արգեանց մեծ բաժինը ունեցալ. ելմտական գործոց մէջ՝ դրամտկան կատարեալ հաւատարմութեամբ մեծամեծ շահեր իրականացուցի և Ս. Աթոռոյ վարկը անցելոյն մէջ նմանը չտեսնուած ատարձան բարձրացուցի, օժտելով վանքը իմ ձեռներէցութեամբ նորաչէն մեծարքէք կալուածներով: Հետեւարար իրառունք կը զգամ բազոքելու կողմնալ բանաձեւին գէմ և խնդրելու Պատկ. Վարչութենէդ, որ այս ամենը անաշառութեամբ նկատողութեան առնոււին, և ինձ հանդէպ արդարութեամբ և Ո. Աթոռոյ վտանգեալ շահուց հանապէպ կեռատեսութեամբ վերաբերուի, որով կարելի պիտի ըլլայ վերահստատել վանուց մէջ կարգ և օրէնք խաղաղութեամբ և առաջըն առնել ապագայ մեծագոյն չարեաց և ծանրագոյն հետեւանաց:

Գրիս երկարութեան համար թ. Արքազնութեանդ ներսպատութիւնը հայցելով մատչիմ ի համբուր Ս. Աջպդ

ՂԵՒՈՆԴ ՎՐԴՊ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

2 Ապրիլ 1907, Կ. Պոլիս

ՊԱՏՀԵՆԻ

Ավենապատիւ Սրբազնն Պատրիարք Հայոց,
Նախագահ Պատկ. Խառն Ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան

Ա. Երուսաղէմի հաշուական խնդրոյն առթիւ
Պատկ. Խառն Ժողովոյդ անուամբ հրատարակեալ բա-
նաձեւ — որոշումի կարգունակութեան քննակին և նախ
Մարտ 23 թուականաւ համառօտ բոլորքիր մը և
սպա Ապրիլ 2 թուականաւ ընդարձակ գիտողագիր
մը մատուցած էի Պատկ. Ժողովոյդ, խնդրելով որ
խղճամիտ նկատողութեան արժանացնէք զայն:

Ցիշեալ գիտողագրով մատնանիշ ըրած էի այն
սխալներն ու հակասութիւնները, որոց վրայ հիմ-
նուած էին նոյն բանաձեւին նկատողութիւններն ու
եղրակացութիւնները, որք երբեք չէին համաձայներ
իրաց խկական վիճակին, և որք կը հակասէին վար-
չական հաշուեքնիչ Յանձնաժողովոյ քննութեանց և
եղրակացութեանց, ինչպէս նաև սկիզբէն ի վեր եր-
կու Պատրիարքարանաց միջեւ գորխանակուած բազ-
մաթիւ գրութեանց: Այլ սակայն տեսնելով որ ար-
դար բոլորներս և օրինական գիտողութիւններս
նկատողութեան չեն առնուիր, և ընդհակառակին թէ՝
աստ և թէ՝ յերուսաղէմ ամեն միջոց ի գործ կը դըր-
ուի յայտնուած ճշմարտութիւնը խափանելու և ան-
քոնարարելի իրաւունքներս կապտուած պահելու,
պարտառորեցայ ներկայիւս կրկնել արդարացի բո-
զոքներս և արդարութիւն պահանջել, յիշեցնելով ո-
րինական հետեւեալ գլխաւոր գիտողութիւններս:

Ա. — Զեր Բ. Սրբազնութեան առ իս ուղղած
1903 Մայիս 18 պաշտօնագրին համեմատ, իմ պաշ-
տօնս էր Երուսաղէմի վանական հաշիւները ներկայա-
ցլնել ի գիմաց Ամեն. Տ. Յարութիւն. Ս. Պատրիարքին
և Նորին խոկ յանձնարարութեամբ: Այս պաշ-
տօնս լիուլի կատարեցի հաշուեքնիչ վարչական
Յանձնաժողովին առջեւ, առանց որ և է վերապահու-
թեան, տալով ամեն պահանջուած հաշիւ, տեղեկու-
թիւն, բացատրութիւն, լուսաբանութիւն ևն: Սա-
կայն ի վերջոյ ինձ ամբատանեալի հանգամանք տալ
ուզուեցաւ, Երուսաղէմէն նորանոր քննական և ամ-
բատանական տեղեկագրեր և նոյն խոկ վարդապետ
մալ բերուելով: Բանաձեւը կ'անգիտանաց առաջին
պարագան և յանիրաւի կը փարի երկրորդին:

Բ. — Կայս. վերջին իրատէով հրամայուած էր
հաշուոց խնդիրը այստեղ նայել ու վերջացնել, սակայն
վարչական Յանձնաժողովի ձեռամբ երկար և մանրա-
զնին քննութիւններ կատարուելէն և անոր տեղե-
կագիրը ընդունուելէն յետոյ՝ բանաձեւը հակառակ յիշ-
եալ Կայս. Իրատէին՝ խնդիրը կը վերադարձն յե-
րուսաղէմ:

Գ. — Բանաձեւը խնդիրը Երուսաղէմ վերադար-
ձնելով ալ չը բաւականանալով՝ զայն բացարձակա-
պէս իմ հակառակորդներուս կը յանձնէ, և այն ալ
իմ բացակայութեանս կատարուելու պայմանաւ, որ-
պէս զի ամեն ճշմարտութիւն ծածկին: Զը գիտեմ թէ
ո՞ր ազգի կամ երկրի օրինագրքին մէջ գրուած է այս
կերպ գատասատան, ուր հակառակորդները կամ դա-
տախազները կարգութիւն դատաւոր:

Դ. — Բանաձեւը՝ մտքերը աւելի շփոթեցնելու և
գայթակղեցնելու համար՝ նոյնպէս չը բաւականանար
նոր շինութեանց հաշիւներուն մատին սուտ ու սխալ

յայտարարութիւնները ընելով, այլ և կը շփոթէ իմ վերին հոկողի և քօնթրոլի դերո, անտես կ'ընէ Ա-թոռի օգտին համար տարած աշխատութեանց ծան- րութիւնները, նոր շինութեանց համագումարը 40 հազար լիրայի կլոր գումարին վերա՞ած միջոցին՝ զանց կ'ընէ յիշել անոր գոյութեան միջացները և տր- տադրած տարեկան 2500 լիրայի հասոյթը, որք ամ- բողջավին արդիւնք են իմ չարաչար աշխատութեանց առանց Աթոռի մատակարարութեան հաշուէն դրամ մը տուած ըլլալու, հետեւաբար թէ՛ նոր շինութեանց համար ծախսեալ գումարները և թէ՛ անոնց արտադ- րած հասոյթները զուտ չահի են Աթոռին համար:

Ե. — Բանաձեւը կը մոռնայ թէ կեդր. Վարչու- թիւնը 1903 օգոստ, 8ին նիստէն ի վեր երաւադէմի նիրքին անկարգութեանց և կուսուրարապետի ևն. խնդիրները մէկ կողմ թողլով հաշուակտն խնդրոյն փարած էր, և միմիայն այդ տեսակէտով բարեինամ կառավարութեան և մինչեւ իսկ վեհ. Կայսեր այնքան դիմումները ըրած և կայս. հրտամաններ ձեռք բերած էր. իսկ այժմ երկու տարւոյ վարչական քննութիւն- ներէն վերջը առանց հաջուական խնդրոյն վերջնա- կան լուծում մը տալու իմ վարչական գործունէու- թիւնո քննադատելու համար զանազան կողմնակի. ձեռնարկներ կ'ընէ, և ինձ չը վերաբերող պատաս- խանատուութիւններ կը ստեղծէ: Եթէ Պատկ. Խառն ֆողովդ կանխաւ որոշած ըլլար վարչական գործու- նէութեանս և Երուսաղէմի նիրկայ անկերպարան վի- ճակի մասին քննութիւն կատարել, և պատասխա- նատուութիւնները ճշգել, այն ժամանակ հարկ պիտի ըլլար անկողմնակալ անձինքներէ յանձնաժողով մը կազմել, որուն առջեւ պատրաստ պիտի գտնուէի տալ ամեն տեսակ տեղեկութիւն և բացատրութիւն, ինչ-

պէս հաշուական խնդրոյն մասին տուի Քննիչ Յանձ- նաժողովին. հետեւարար տագորէն է բանաձեւին այդ մասին հանած եղրակացութիւնները, որք որ և է քննութեան մը հետեւանք չեն, և ո՞չ ալ ինձմէ բա- ցատրութիւն ուզուած: Ո՞ւր տեսնուած է որ առանց մէկը կանխաւ ամբաստաններու, առանց անոր լիկու: Դատապարտութեան վճիռ արձակուի անոր դէմ: մա- հապարտ ոճրագործներուն անգամ օրինօք ընդուրձակ իրաւունքներ տրուած են անձնապաշտպանութեան: Ուստի կը մերժեմ բանաձեւին այդ մասին ըրած դա- տաստանն ալ:

Զ. — Մինչդեռ Քննիչ Յանձնաժողովը յետ ման- րակիլիս քննութեանց՝ հակառակորդաց արարքներն ու նախատակները միաձայնութեամբ կը դատապարտէ, հիմնուելով անոնց բերանացի՝ խոստովանութեանց, հակասական գրութիւններուն, փաստերու, ապացոյց- ներու և կատարուած իրողութեանց վրայ, բանաձեւը՝ ընդհակառակն՝ առանց ո՞ր և է քննութեան և ապա- ցոյցի, մէկ գրչի հարուածով բուռն ճիգ մը կ'ընէ ընդհ- անուր ձեւի մը տակ արդարացնել զանոնք, գոհու- նակութեան արժանի նախանձախնդրութիւն անուա- նելով այնպիսի արարքներ, որոց պատճառած նիւ- թական և բարոյական վնասները չեն կրնար ծած- կուել. բաւական էր նկատողութեան տանել զանքին վերջին երկու տարւոյ կացութիւնը և տեղի ունեցուծ զեղծումները, չարչաշնութիւնները և անաստելի խայտառակութիւնները, որոց պատճառաւ տոկոսա- ւոր պարտքը սոսկալի կերպիւ բարդուած է:

Է. — Վարչական Քննիչ Յանձնաժողովի տեղե- կադիրը Խառն ֆողովոյ կողմանէ աւելի լուրջ ուշա- դրութեան առնուելու համար կանխաւ տրուած որոշ- ման հասեմատ օրինակները ժողովականոց բաժնուած:

էլն , սակայն յաջորդ նատին , առանց ներկայ ժողովականութիւններն ու գիտողութիւնները առնելու , առանց բացակայ ժողովականաց գրաւոր յայտարարութիւնները կարգավոր , նոյն խոկ առանց նոյն տեղեկագիրը օրինական քուէարկութեան դնելու՝ մէկ կողմ կը թողուի՝ նախապատուութիւն տալու հատիւր Ատենապետաց Յանձնաժողովի անուամբ ներկայացուած բանաձեւին , որ յանուն Խառն Ժողովին կը հրատարակուի լրագրաց մէջ : Արդարացի չէ՞ գիտել տալ թէ ինչո՞ւ համար Յանձնաժողովի տեղեկագիրը վիճաբանութեան չինթարկուեցաւ , որպէս զի , եթէ մութ կէտեր կային , Յանձնաժողովի կողմանէ լաւարանուէին և ի հարկին ինձմէ ալ բացատրութիւններ պահանջուէին , որով տեղի չէր մնար բանաձեւի հակառակութեանց և սխալներուն :

Սակայն կը կարծեմ թէ արդէն Զեր Բ . Մրուզնութիւնը , ինչպէս նաև Խառն Ժողովը և բոլոր Աղքը արդէն հասկցած են թէ հաշուական խնդիրը լոկ պատրուակ մ'էր թէ՛ բուն խնդիրը տարրեր հանգամանք մ'ունի . հակառակորդք անդամ կը խոստավանին զայս :

Արդ . Մրազան Հայր , գառնապէս կրկնելով իմ օրինական և արդարացի բողոքներս , կը խնդրեմ Պատկ . Խառն Ժողովոյ բոլոր յարգելի անդամներէն խոճի մտաք նկատողութեան առնել իմ բոլոր գրաւութիւններս , չը ներել որ իմ այնքան երկար տարիներու չարաչար աշխատութիւններս թշնամութեանց և քիւնախնդրութեանց զոհուլին , ապա թէ ոչ միշտ բողոքող պիտի մնամ և պիտի պահանջեմ արդարութիւն ուր որ ձայնո հասնի , մինչեւ որ արդար գոհացում մը տրուի ինձ : Նոյնպէս կը խնդրեմ որ ինձ վերադառնուին իմ անբռնաբարելի իրաւունքներս և արդա-

րացի պահանջներս . իսկ եթէ Պատկ . Վարչութիւնդ քանից իրաւունքներս հաստատած և պահանջած լւալով հանդերձ ձեռնպահ լլալ որոշէ , կը ինդրեմ որ հաճի իմացնել ինձ թէ՝ ուր կամ որո՞ւ գիտելու եմ իրաւունքներս ձեռք բերելու համար , որպէս զի ի վերջոյ մեղադրանքի առարկայ չըլլամ :

Համբուրիւ Ա . Ալոյ Բարձր Մրազանութեանդ

Դեկտեմբ . Վրա . ՄԱՐՍՈՒՏԵԱՆ

2 Մայիս 1907 , Կ . Պոլիս

Պ Ա Տ Ճ Է Ն

Ամենապատիւ Մրազան Պատրիարք Հայր ,
Նախագահ Պատկ . Խառն Ժողովոյ
Ազգ . Կեդր . Վարչութեան

Տեսնելով որ Ա . Երուսաղէմի հաշուական խընդրոյն առթիւ ֆողովոյդ անուամբ հրատարակեալ բանաձեւ—որոշումի պարունակութեան մասին հետզհետէ Մարտ 28 , Ապրիլ 2 և Մայիս 2 թուականներով ուղղած բողոքագրերս Պատկ . ֆողովոյդ կողմանէ տակաւին նկատողութեան չեն առնուած . նոյնպէս տեսնելով որ՝ հակառակ նոյն խոկ բանաձեւ—որոշումին՝ յերուսաղէմ նորանոր ապօրինութիւններ և անիրաւութիւններ կը գործուին . իսկ ես ասու կը մնամ իմ զրկեալ և կաշկանդեալ վիճակիս մէջ , պարտաւորեալ ներկայիւս կրկնել իմ բողոքներս ու գիտողու-

թիւններս յիշեալ բանաձեւի սխալ պարունակութեանց և անիրաւ որոշմանց գէմ, և արդարութիւն խնդրել, պահանջեսվ որ խորին ուշադրութեան տանուին յիշեալ գրերս և գոհացում տրուի միանգաւոյն հետեւեալ խնդիրներուն և բողքներուն,

Ա. — Յօգուա Ա. Աթառոյ իմ կատած անձնական կալուածներուս յափշտակուած եկամոււաները, որոց անբռնաբարելի հանգամանքը ճանչցած են արդէն նախորդ և ներկայ վարչութիւնք և ըստ այնմ որոշումներ արտաւած, զճռաբար ինձ վերագարձնել և կամ զանոնք ձեռք բերելու միջոցը ցոյց տալ ինձ:

Բ. — Նոր ջնութեանց և այլ հաշիւններէն իմ անեցած պահանջներս ինձ վճարել տալու տհօրինութիւն մընել:

Գ. — Իմ պաշտօնա լիուլի կատարած ըլլալով՝ Պոլսէն մելինելու համար հարկ եղած անցագիրը հասնել տալ:

Դ. — Լսելով որ յերուսաղէմ գաղտնի խորհուրդներ կը լսան վանքին մէջ ունեցած անձնուկան սինեակներո պատրուակաւ մը բանուու և գոյքերս գրաւելու, կը խնդրեմ որ ոռաջքն առնուի այդ բռնաբարութեան և անկէ յառաջ գալիք ծանր անպատեհութեանց:

Ե. — Տեղեկանալով որ Հաշուեքննիչ Յանձնաժողովին տուած հաշուեթղթերս և յարակից գրերը երուսաղէմէն ուզուած են՝ կանխելով նոյն իսկ բանաձեւին մէջ որոշուած եղանակը, գիտել կուտամ որ, յիշեալ թղթերը ո՛չ բանաձեւին մէջ յիշուած եղանակաւ և ո՛չ ուրիշ ձեւով երուսաղէմ զրկելու և հակառակորդաց ձեռքը անցնելու պէտք չկայ, որովհետեւ արդէն Քննիչ Յանձնաժողովոյ արտօնութեամբ ժամանակին հաշուեթղթերուն օրինակներն հան-

ուած և թէ՛ համ . թէ՛ յերուսաղէմ հակառակորդաց հազորդուուծ և մինչեւ իսկ անհնց գրաւոր գիտազութիւններն ալ առնուուծ են . իսկ յարակից բացատրութեանց և ծանօթաւթեանց թղթերը հակառակորդներուս բնաւ չեն պատկանիր, որպէսհատեւ քննող և գտանդ վարչական ժաղանց համար գրած եմ զանոնք և ո՛չ թէ հակառակորդաց համար, որոց ուղղամըտութեան և հաւատարմութեան վրայ վատահիլ անկարելի րլրաէ զատ՝ թերեւս նորանար թշնամութեանց նիւթեր հայթայթեն անհնց ձեսքը, իսկ երթալիք պատուիրակները կրնան և պէտք է, որ հոսուսումասիրեն զանոնք և ինձմէ ալ լրացուցիչ բերանացի աեղեկութիւններ ստանան:

Զ. — յերուսաղէմ վերջերս Միաբ · Ընդհ. Ժողով գումարեր են և առանց ապասելու կեդր . Վարչութեան պատուիրակներուն գալատեան, ինչպէս միաբանութեան մէկ մասը իրաւամբ առարկած էր, կարեւոր որոշումներ և ընտրութիւններ ընելու ձեռնարկեր են: Ծանօթ խմբակը ամեն տեսակ ապօրէն միջոցներով միշտամունութիւն կազմած՝ կը յաջողի յառաջ տանիլ իր նպատակից՝ լրւարարապիտ ընտրելով զԴաւիթ Վարդապետ Տէրտէրեան, և արտաքսման վճիռ արձակելով Տ. Գէսրդ Արքապան Արքեպիսկոպոսին գէմ: Ներկայիւս նպատակ չունիմ տեղի ունեցուծ օրինազանցութիւնները մատնանիշ ընել, այլ կը բաւականանամ բազոքու արձանագրել և Պատկ. Ժաղովոյդ ուշադրութիւնը հրաւիրել այդ երկու որոշմանց վկասակար հետեւանքներուն վրայ: Յայտնի են արդէն Տ. Գէսրդ Արքեպիսկոպոսի անձն ու արժանիքը և բազմամեայ ծառայութիւնները, որուն գէմ արտօւած վճիռը և ո՛չ մէկ օրէնքով չարդարանար . իսկ Դաւիթ Վարդապետ անփորձ և զուրկ է

հմտութենէ և արժանիքէ, չունի այդ լարձր պաշտօնը վարելու հանգամանքները, ո՞ր և է վարչական պաշտօն չէ վարած, այլ ծանօթ է միայն յանդուգն արարքներով և բուն հեղինակը եղած է բարեկենդանի հռչակաւոր կոփամարտութեանց։ Ահաւասիկ երուսադէմի ներկայ անկարգ և անկերպարան վիճակին հետեւանքները, որոց առաջքն առնել հարկ է։

Համբուրիւ Ս. Աջոյ Բ. Սրբազնութեանդ
Գեհոնդ ՎՐԴՊ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

15 Մարտ 1907, Կ. Պոլիս



Պ Ա Տ Ճ Է Ն

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,
Նախագահ Պատկ. Խառն Ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան

Ստուգած ըլլալով որ յերսուաղէմ նորաշէն կալուածոց հաշուոյն թ. 86 օթէլին չորս տարւոյ ապառիկ վարձքերէն մնացած 4800 գալզիական ոսկի պահանջն իր պայմանեալ 7% առկսոներով հանդերձ իբր 6000 գաղ. ոսկի՝ թուականէս երկուքուկէս ամիս առաջ վճարուած է վարձակալի երաշխառորին կողմանէ, կուգամ ուրախութեամբ որտի հաղորդել զայդ Պատկ. Ժողովոյդ ի գիտութիւն և ի միամը տութիւն։

Գոհ եմ, Սրբազան Հայր, որ յիշեալ վճարումով ո՛չ միայն Երուսաղէմի Աթոռը կը տիրանաց իր իրաւունքին, այլ և գործնապէս կը հերքուին ինձ գէմ եղած երկու անտեղի քննադատութիւններ։

Առաջինը սա է որ, իբր թէ այդ պահանջքը անապահով և գանձումը կասկածելի էր, մինչդեռ Գերմ. հիւպատոսարանի միջոցաւ երաշխառորեալ և ապահովեալ ըլլալով՝ նոյն իսկ պայմանաժամկն (1905 Դեկտ. 1 Ն. Տ.) կրնար գանձուել, եթէ ժամանակին հոգ տարուէր և հարկ եղած միջոցները ի գործ դըրուէին։ Այս նպատակաւ արդէն կանխած էի Հաշուեքննիչ Յանձնաժողովին և կեդր. Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել, ինչպէս նաև պայմանաժամէն վերջն ալ նոյնը կրկնել պարտաւորեցայ, պատասխանատուութեան ենթարկելով ամին անոնք, որք որ և է եղանակաւ վտանգեն նոյն գումարը։ Կեդր. Վարչութիւնը թէե այս մատին ազգարարութիւններ ըլլաւ յերուսաղէմ, սակայն այն տեղէն փոխանակ գոհացում տրուելու և Աթոռին շահը ապահովելու, ընդհակառակն իրենց անհոգութիւնն ու ապիկարութիւնը ծածկելու համար անտեղի և անպատշաճ պատասխաններ միայն տուած էին։

Իսկ երկրորդը՝ նոր շինութեանց հաշուէն պտրտք թողած ըլլալս էր, մինչդեռ 1905 Ապրիլ 30 թուակիր հաշուեցոյցովս նոր շինութեանց ընդհ. հաշուէն 5300 Օսմ. ոսկիի պարտք մը ցոյց տուած ատենս 5750 Օսմ. ոսկիի գանձելի պահանջներ թողած էի, որք մինչեւ 1905 Դեկտ. 1 (Ն. Տ.) պիտի գանձուէին ամբողջապէս, և որոց մէկ կարեւոր մասն ալ 1903 Յունի.՝ Ապրիլ իրենք գանձած էին արդէն, ինչպէս մինչեւ ցարդ կը շարունակեն գանձել նոր շինութեանց պատկանեալ հասուլուց, որք առեկան 2000 Օսմ.

օսկիի գումար. մը կը կազմեն յօդուտ Աթոռին, և որք բացարձակապէս նոր շինութեանց պարտքին յատկացուած էին, սակայն իրենք քմահած եղանակաւ և տարեկան ելեւմտից բացը նուազազայն յոյց տալրւ խորհրդավ ոսկորական հասոյթներու կարգը անցուցած և այս կերպիւ անկանոնութիւն և շփոթութիւն յառաջ բերած էին հաշուաց մէջ, որպէս զի նոր շինութեանց հաշիւը պարտական պահելով քննադատելի հանգամանք մը տան անոր:

Ո՞նտարակայս եմ, որ Պատկ. ժողովդ վերացիշեալ իրողութիւններով պիտի համոզուի թէ ո՞րքան անտեղի էին նոյն պահանջքի մասին եղած կասկածներն ու գիտողութիւնները, զորս աւելորդ պիտի համարեի յիշել աստանօր, եթէ մեծ կարեւորութիւն տըրուած չըլլար անոնց Հաշուեքննիչ Յանձնաժողովի երկու յարգելի անդամոց կողմանէ, (Գէորգ էֆ. Ասլանեան, Վահան էֆ. Սուրենեան), որք տեղեկագրին տակ իրենց ըրած առաջին յաւելուածին մէջ ծանօթ խմբակի արարքն ու նպատակը խոստովանելով և գտոտպարտելով հանգերձ՝ իմ բազմամերայ ծառայութեանց նիւթական և բարոյական արժէքը նուազեցնելու նվաստակու ինչ ինչ ենթադրութիւններ ու հաշիւներ ընելով, իշարս ուրիշ շատ մը յալտնի սխալներուն, նոյն պահանջքը զանձելու համար 1900 ոսկիի գեղչ մը ընելու անհարկի պէտքը կը ցուցնէին, և անոր վրայ կը հիմնէին իրենց գնահատումը նոր շինութեանց այնքան շահաւէտ գործի մասին՝ իրը ոչարգիւնաբեր ներկայացնելով զայն։ Բայց մէկ կողմ թողլով գործերուս մասին եղած այդ սխալ դնահատումը, յիշեալ պահանջքիս առթիւ պաշտօնապէս յայտարարուած այդպիսի գաղափար մը ուրիշ ըանի չէր կընար ծառայել, եթէ ոչ նոյն երաշխաւորեալ

գումարի գանձման մասին վանական վարչութեան անհոգութիւնն ու աղիկարութիւնը սքողելու և պարտականը յուսագրելու, որ նոյնպիսի զեղչ մը ակնկալէ, և հետեւաբար եթէ պարտականին կողմանէ այդպիսի պահանջում տեղի ունենար և գոհացում գտնէր, գժբախտաբար իրը հետեւանք պիտի նկատուէր այդ յայտարարութեան։ Անշուշ Ատենապետաց Պատ. Յանձնաժողովն ալ նոյն գիտողութիւններէն և ենթագրութիւններէն աղդուած էր՝ իր ծանօթ լանաձեւով ըրած անհիմն առարկութիւններուն և սխալ գատաստաններուն մէջ, որոց գէմ բողոքած եմ ու կը բողոքեմ յաւիտեան, մինչեւ որ անկողմանկալ ատեան մը արգարութեամբ գատէ իմ գործերս, ինչպէս նաև այլոց արարքներն ու յառաջ բերած այնքան նիւթական ու բարոյական վնասները, մանաւանդ վերջին երկու տարիններու միջոցին, որք անտես տոնուեցան՝ միմիայն իմ բազմամերայ և անձնուէր ծառայութիւններս քննադատելու և ինձ չպատկանող պատախանատուութիւններ ստեղծելով ինձ վերագրելու համար։

Բայց այսու հանգերձ մխիթարուած եմ, տեսնելով որ պարտականին կողմանէ վերացիշեալ պահանջքին վճարմամբ նոր շինութեանց հաշիւը 1903 թուականին փակուած և պարտքը վճարուած կ'ըլլայ, որով այնուհետեւ ազատ կը մնայ նոր շինութեանց աթոռապատկան 2000 Օսմ. ոսկիի տարեկան հասոյթը, բացի կենդանի միտրանից պատկանեալ տարեկան 500 Օսմ. ոսկիի տարեկան հասոյթներէն, որք նոյնպէս յառաջիկային մէջ վանքին պիտի մնան։ Ասոնցմէ գուրս են 1890էն տուաջ կառուցեալ նոր շէնքերուն տարեկան 1500 Օսմ. ոսկիի հասոյթները, որոց մէկ մասը կենագանի միտրանից կը պատկանի, իսկ մնացեալը հանգ

գուցեալ միաբաններէն վաճքին անցած են արդէն։ Հետեւաբար յօպուտ Երուսաղէմի Աթոռին և անոր ապագային ըրած ջանքերս արդիւնաւորուած, նպատակը՝ գոնէ մասսամբ՝ իրագործուած, և առանց Աթոռի ելեւմուտքէն ստակ մը առնելու տարեկան հազարաւոր սոկին երու նոր հասոյթներ ապահովուած ըլլալով, ինքզինքս բարոյապէս վարձատրուած կը համարեմ, հակառակ ինձ դէմ ի գործ գրուած յայտնի զրկութեանց և անիբաւութեանց։

Գալով նոր գնեալ կալուածոց հաշուէն մնացած 4500 Օսմ. սոկիի պարտքին, թէև վաճառումներէ գոյանալի գումարներով պլատի հասուցուէր, բայց և այնպէս նոր շինութեանց 1905—1907 գոյանալի հասոյթներով ալ կինար հասուցուիլ, ինչպէս կանխատեսուած էր արդէն 1903ին։ Հետեւաբար նոր շինութեանց հասոյթներու շնորհիւ այժմ նոյն պարտքն ևս հասուցեալ պէտք է համարել, իսկ եթէ յերուսաղէմ հաշիւները իրարու հետ շփոթած և կորուստներու կամ վրասներու տեղի տուած են, կեզր. Վարչութեան կը մնայ պատասխանատունները ֆնտուել և վնասը դարձանել տալ։ Այս առթիւ անգամ մը եւս կը յիշեցնեմ թէ յիշեալ գնումները ո՛չ անձնական օգտիս, ո՛չ գաղտնի, և ո՛չ քմածին կերպով կտատարած եմ, սխալ է նոյնպէս կարծելը թէ վերջին պահուն անցուցած ըլլամ զանոնք հաշուց մէջ, այլ ընդհակառակական յայտնապէս և Աթոռի կարեւոր շահերուն պատճառաւ գնուած են անոնք, որոց մասին հարկ եղած բացատրութիւնները տուած եւ արդէն։

Վերջ ամենայնի, Զեր Բ. Սրբազնութեան ներուղամութեան ապաւիններով կը յիշեցնեմ նախորդ բոզքագրերս և դիտաղագրերս. Պատկ. Վարչութեանդ խորին ուշադրութիւնը կը հրաւիրիմ վերջին երկու

տարիներուն մէջ յերուսաղէմ կատարուած պժգալի իրողութեանց գեղծումներուն, տոկոսաւոր պարտքի ամհարկի աճման, յ. Տեղեաց մէջ Ազգ. իրաւանց կորուստներուն, Միաբանութեան քայլայման, և յանիբաւի զրկեալներու վիճակին վրայ, և խնդիրներուն կատարումը խնդրելով կ'ազաչեմ որ Պատկ. Վարչութիւնը բաւական համարէ ինձ դէմ եղած հաւածանքն ու զրկանքը և արդարութեամբ անօրինէ զարժանն, որուն ախոցէտ կը սպասեմ։

Համբուրիւ Ս. Աջոյ Բարձր Սրբազնութեանդ

Դեկտնդ Վրդ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Կ. Պոլիս, 12 Յունիս 1907



Խառն Ժողով
Ազգ. Կեդր. Վարչութեան
Համար 138

Կ. Պոլիս, 16 Յունիս 1907

Հոգեւորի Տ. Ղեւոնդ Վրդ. Մախուտեան

Յունիս 12 թուակիր գրութիւն մ'ալ ուղղեր էլք, որ համաձայն Զեր նախընթաց գրերուն, Խառն Ժողովյ մէջ կարգացուելով, նկատի առնուեցաւ, և Զեր մտաց հանդարտութեան համար կը յիշեմ այս տեղ թէ Փետր. 21, Մարտ 14, Մարտ 28, գարձեալ Մարտ 28, Ապրիլ 2, Մայիս 7 և Մայիս 15 թուա-

կանները կը կրեն։ Ասոնցմէ երեքը (Փետր. 21 և Մարտ 14 և Մարտ 23) նիւթ ունին Երուսաղէմի մէջ Զեր սեփականութիւն եղող կալուածոց արդիւնքներուն գանձումը, իսկ մնացեալները Երուսաղէմի Աւթուոց հաշուոց մասին վարչական գործողութիւնները։

Կալուածոց արդիւնքին գանձման մասին կեդր. Վարչութիւնը իր որոշումը տուած և Երուսաղէմի Ամեն. Պատրիարքին հազորքած է թէ՝ այդ արդիւնքները պէտք է կանոնաւուապէս վճարուին և թէ անոնց վճարումը որ և իցէ պարագայի մէջ Ս. Աթուուին իրաւանց վետո մը չկրնար հասնիլ, և Ն. Բ. Սրբազնութիւնը ընդունելով հանդերձ կեդր. Վարչութեան սոյն որոշումը, յայտնած է թէ վճարման յապաղումը պատահական պատճառներով տեղի ունեցած է։ Ըստ այսմ կը մնայ միայն կեդր. Վարչութեան որոշման գործադրութիւնը, զոր դուք կարող էք կարգադրել ուղղակի Երուսաղէմի Ամեն. Պատրիարքին դիմելով։

Իսկ ինչ որ կը վերաբերի հաշուոց մասին կատարուած վարչական գործողութեանց, Զեր գրածները սխալ հասկցողութեանց կամ թէ կեղակարծ տեղեկութեանց վրայ հիմնուած թիւրիմացութիւններ դատուեցան և կեդր. Վարչութեան իտան ժողովը հետեւեալ որոշմանց յանդեցաւ։

Դուք կը սիրէք միշտ Ատենապետաց Դիւանի բանաձեւի մը վրայ խօսիլ, մինչ այլ ևս բանաձեւի խօսք չկրնար ըԱպալ, քանի որ կեդր. Վարչութեան իտան ժողովոյ պաշտօնական որոշումը տեղի ունեցած է։

Զեր լոելու հարկը կ'առարկէք, մինչ Դուք ընդարձակօրէն լուուեցաք Ատենապետաց նախաքննութեանց ատեն։

Քննիչ Յանձնաժողովոյ կարծիքը կամ լաւ ևս Յանձնաժողովոյ անդամոց սմանց կարծիքը իրը վերջնական որոշում կուգէք ներկայել, մինչ նախաքննութիւնը և Յանձնաժողովոյ տեղեկագիրներ երբէք վճռական ձև չեն կրնար ունենալ։

Թող որ Քննիչ Յանձնաժողովը անկանոնութեանց և անտեղութեանց գլուխները յայտնի նշանակած է, և անոնց գլխաւոր պատասխանատուութիւնը բնական էր որ զործունէութեան մէջ գլխաւոր գեր ունեցաղին վրայ ծանրանար։

Պոլիսէ Երուսաղէմ կամ այլուր երթալնուգ հրամանը ընդունելու համար իրը Երուսաղէմի միարան հարկ էր որ Ս. Երուսաղէմի Պատրիարքին դիմէք և ո՛չ կեդր. Վարչութեան։

Կեդր. Վարչութեան կարգադրած գործողութեանց մասնակցելու համար Երուսաղէմ երթալնուգ պարագան այն տաեն միայն կրնաց նկատի առնուելի, երբ կեդր. Վարչութեան պատասխաները մեկնին։ Վերջին օրեր կատարուած գանձման մը պարանիները գետ կեդր. Վարչութեան հազորքաւած չլինելով, առոր արժէքին մասին զազափար կազմել դժուար պիտի ըլլայ։

Այդ կէտերը ճշդելով կեդր. Վարչութեան իտան ժողովը՝ խնդիրը առ այժմ փակեալ կը նկատէ, և այլ ևս նորանոր դիմումներու հիմ չգաներ։

* * * * *

Մնամք ազօթարար
Պատրիարք կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՈԽՈՎՈՍ

Պ. Ա. Տ Ճ Ե Ւ

Ամենապատի Մրբազան Պատրիարք Հայր,
Նախագահ Պատկ. Խառն Ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան

Պատիւ ունեցայ ստանալու Զեր Բ. Մրբազնութեան 16 Յունիս 1907 թուտկանու և 1:38 համարաւ պաշտօնագիրը ի պատասխանի խմ նախորդ գրութիւններուու:

Անձնական կալուտածոցս արդիւնքներուն վճարման մասին կեդր. Վարչութեան տուած որոշմանց և յերաւադէմ ըրած ազգարարութեանց համար ջնարհակալութիւնու կը մատուցանեմ: Սակայն չեմ կրնար հառկնալ թէ ինչո՞ւ համար կեդր. Վարչութիւնը իր որոշմանց կարգադրութիւնը ինձ կը թողու և կը յանձնարորէ ուղղակի երուսաղէմի Ամեն. Պատրիարքին գիմել: Եսինը կ'ընէ երուսաղէմ կամ այլուր երթալուս խնդրացն առթիւ, առարկելով թէ իրը Միաբան՝ երուսաղէմի Ամեն. Պատրիարքին գիմելու եմ հրաման ստանալու համար: Թողունք որ գուրսը գտնուող Միաբանից համար տեղէ տեղ և նոյն իսկ երուսաղէմ երթալու համար երուսաղէմին հրամանի սպասելու պէտք և սովորութիւն չկայ, բայց կեդր. Վարչութիւնը զիս երուսաղէմ գիմելու հարկագրած ատեն արդեօք կ'անգիտանա՞ր հոն տիրող իրաց վիճակը. միթէ եկամուտներուու մասին մինչեւ ցարդ անկէ արուած պատասխանները բաւական չէ՞ն գաղափար մը կազմելու այդ մասին: Բաց յայսմանէ, թող ներէ

Զեր Բ. Մրբազնութիւնը, որ գիտել տամ թէ քանի որ կեդր. Վարչութիւնը զիս հսու բերել տուած էր, կարծեմ թէ այլ ևս անոր կը պատկանէր խմ խնդիրներու և երուսաղէմի հետ ունեցած գործերու կարգադրել, ինչպէս նաև Պոլսէն մեկնելուու անցագիրը տուլ: Այս պատճառաւ կը խնդրեմ որ հաճիք հրաման ընկել Պէրութի համար անցագիրս հանելու, զիտնալով որ անհրաժեշտ պէտք ունիմ հանգստի և օդափոխութեան:

Գալով հաշուական խնդրոյն առթիւ Զեր Բ. Մրբազնութեան գլածներուն, կը պարտաւորիմ ներուղամութիւննիդ հայցել յայտնելու թէ բանաձեւը իրը կեդր. Վարչութեան որոշում նկատելով հանգերձ՝ չեմ կրնար անոր նկատողութիւններն ու եղբակացութիւնները ընդունիլ, քանի որ անսնք չեն համապատասխաներ ո՛չ կատարուած մանրազննին քննութեանց և ո՛չ ալ իրաց իսկական վիճակին. ուստի կը կրկնեմ բազոքներս և անգամ մը ևս կեդր. Վարչութեան ուշագրութիւնը կը հրաւիրեմ անոր պարունակութեան վրայ:

Այս առթիւ պարտաւորուած եմ յայտնելու թէ Ատենապետաց Յանձնաժողովին միայն մէկ անգամ ներկայ գմնուեցայ, ուր կրօն ժազովյ Ատենապետք բացակայ էին, և հակառակ ցոյց տուած պատրաստականութեանո՝ այլ ևս չկոչուեցայ. իսկ նոյն օրը ինձ եղած հարցումները հարեւանցի խնդիրներու շուրջը կը գառնալին, որոց առթիւ տուած տեղեկութիւններս ալ սխալ մեկնուած են բանաձեւին մէջ. հետեւարար ոչ ես ընդարձակօրէն լսուած եմ նոյն Յանձնաժողովին մէջ և ո՛չ ալ որ եէ քննութիւն կատարուած է բանաձեւին մէջ յարուցեալ խնդրոց մասին:

Կ'աւարկուի թէ Քննիչ Յանձնաժողովը ալ անշահնութեանց և անտեղութեանց գլուխները յայտնի նշանակած է, և աշդչափը բաւական կը համարուի գլխաւոր պատասխանատութիւնը ինձ գերազերու, իբր թէ այդ խնդրոց մէջ գլխաւոր գերը ունեցած ըլլամ: Այլ սակայն Քննիչ Յանձնաժողովը ճշգած էր պատասխանատութիւնները, որք և ոչ մէկ օրէնքով իմ վրաս շեն ծանրանար, որովհետեւ ևս ո՛չ Միաբանութեան պետն էի և ո՛չ ալ այնպիսի պաշտօն մը յանձնուած էր ինձ, որ ըստ այնու այդ պատասխանատութիւնը ստանձնած ըլլոցի: Այնու ամենայնիւ եթէ Քննիչ Յանձնաժողովի տեղեկագրին մէջ օրինակը ըստ օրինի կանխաւ ինձ հազորդուած ըլլար, այն ժամանակ տոիթ պիտի ունենայի այդ խընդիրներն ալ պարզելու, սակայն հազիւ թէ տեղեկագիրը հրատարակուած էր, երբ բանուձեւը հրատարակ ելու, որով միջոց չունեցաց այդ մասին դիտողութիւններս ընկելու: Բայց և այնպէս այդ խնդիրները անկարեւոր էին նկատմամբ ինձ դէմ յարուցեալ և քննութեան առարկայ եղած հետեւեալ հիմնական խնդիրներուն, այն է, իբր թէ հաշիւ չեմ տուած և թէ՝ մատակարարութեան հաշուոց մէջ ահագին գումարներ (30—40,000 լիլայ) իւրացուցած եմ: Յանձնաժողովը յետ մանրակրկիտ քննութեանց ՄիԱԶԱՅՆՈՒԹԵԱՄԲ հաստատեց թէ ո՛չ միայն հաշիւ է խոյս տուած չեմ, այլ ընդհակառակին տակին հաշիւ, նոյն իսկ նոր շնութեանց հաշիւներն ալ ժամանակին ներկայացուցած եմ Տնօրէն Ժաղովին, որ յետ քննութեան ընդունած է զանոնք, և թէ՝ զործերուս մեջ որ եւ է զեղծում չկայ: Հետեւաբար պէտք չէր մնացած այլ ևս նոր շնութեանց մասին յերուսաղէմ նոր քննութիւններ կատարելու, և այն ալ 10—15 տարիներ

վերջը, և ո՛չ ալ անպատճառ զիս դպտապարտելու համար օրինական կամ վարչական յանցանքներ փընտըռելու:

Արդ քանի որ կեդր. Վարչութիւնը հաշուտկան խնդիրը փակեալ հռչակեց, և քանի որ ես այլ ևս ո՛ր և է անձնական պատասխանատութիւն չունիմ, ուստի կը խնդրեմ որ բարեհածիք պէտք եղած վըճռական ազգարարութիւնն ընել յերուսաղէմ, որ նոր շինութեանց և այլ հաշիւներէն ունեցած պահանջներս վճարեն, ինչպէս նաև Պոլիս բերուելուս և հոս ունեցած ծախքերս, որոց յիշատակութիւնը ըրած չէր Զեղ Սրբազնութիւնը իր պաշտօնագրին մէջ ինչպէս նաև չէր յիշած սենեակիներուս ապահովութեան բառ սին ըրած խնդիրքս:

Իսկ ինչ որ կը պատկանի հակառակորդաց արարքներուն, բալորովին քօղարկուեցան անոնք, և մինչեւ իսկ գոհունակութեան արժանի դատուեցան բանաձեւին մէջ, մինչդեռ Քննիչ Յանձնաժողովը յետ քննութեան ՄիԱԶԱՅՆՈՒԹԵԱՄԲ գատապարտելի գըտած էր զանոնք, հաստատելով թէ քիմածին և հակասական հաշիւներ հնարած են մտքերը շփոթեցնելու համար, և Ցեղեկագրի առաջին յաւելուածը ոտորագրողք՝ միեւնոյնը կրկնելով՝ կը յաւելուն թէ անհաշտ ոգուով և կանխամտածութեամբ շարժած են մատնելով Միաբանութիւնը ներկայ պատակեալ վիճակին: Եղնպէս բնաւ նկատազութէան չառնուեցան Աթոռին և Միաբանութեան ցաւալի վիճակը, միաբանական և ժողովրդական հանրագրերն ու գանգատագրերը, որով հակառակորդք առաւել ևս յանդգնութեամբ գործել սկսան յերուսաղէմ, ուր մինչեւ իսկ Միաբանական Ընդհ. ժողովին մէջ բռնաբար յառաջ կը տանին իրենց ապօրէն նպատակը, առանց սպատելու գոնէ,

որ կեդր . Վարչութեան պատուիրակները հասնին , ինչպէս որոշուած էր :

Նախորդ գիտողագրերէս և բողոքագրերէս վերջը ներկայու մատուցանելով Պատկ . Ֆողովոյդ , այլ ևս ամեն պատասխանատուութենէ աղատ կը համարիմ անձս , և կը խնդրեմ որ վերոյիշեալ եկամուտներս ու պահանջներս ինձ վճարել տալու միջոցները անօրինէ , որպէս զի տեղի չմնայ նորանոր գիմումներու :

Համբուրիւ Ս . Ալոյ Բ . Արբազնութեանդ

Ղեկոնդ ՎՐԴՊ . ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Կ . Պոլիս , 25 Յունիս 1907

~~~~~

Պ.Ա.Տ Ճ Ե Ն

Ամենապատի Մրազան Պատրիարք Հայր ,  
Նախագահ Պատկ . Խառն Ժողովոյ  
Ազգ . Կեդր . Վարչութեան

Ներկայ տարւոյ Յունիս 12 թուակիր գրովս փութացած էի հազորդել թ . Արբազնութեանդ թէ երուսաղէմի նորաշէն կալուածներէն թիւ 86 օթէլի չորս տարւոյ ապառիկ վարձքերը 4800 Գալ . սոկին պայմանեալ 70% տոկոսներովն հանդերձ՝ իբր 6000 սոկի՝ վճարուած էր վարձակալի կողմանէ , որով գործնա-

պէս կը հերքուէին նոյն գումարի գանձման մասին եղած կասկածներն ու քննադատութիւնները :

Ցիշեալ տեղեկութիւնը հազորդած ժամանակս թէւ ի ձեռին ունէի սոոյզ տեղեկութիւններ , սակայն Զեր Սրբազնութիւնը իւր 16 Յունիս 1907 և համար 138 պաշտօնագրով այդ ինդրոյն պատասխաննելու առթիւ զգուշացած էր ո՞ր և է կարծիք յայտնելու , առարկելով թէ նոյն գումարի «գանձման պայմանները գեռ կեդր . Վարչութեան հազորդուած չլինելով . անոր արմէքի մասին գաղափար կազմել գժուար պիտի ըլլայ» :

Այս անգամ յիշեալ վարձակալը՝ վանքին հանդիպ իր յանձնառութիւնները ներփակած ըլլայր տպացուցնելու համար՝ ինձ զրկած է օրինակը այն հաշուեցոցին , որով կարգագրուած է իւր պարտուց խնդիրը և որուն համար 1907 Ապրիլ 17ին (Ն . Տ.) վճարած է 120,000 ֆրանք հետեւեալ հաշոյն համեմատ .

|                                     |                   |
|-------------------------------------|-------------------|
| 1906 Յունիս 1ին իր պարտքը (4 տար-   | Թրանք             |
| ւոյ վարձքեր 96,000 ֆր . և բանած     |                   |
| 70% տոկոսներ 16,800 ֆր.)            | 412,800 —         |
| 1906 Յունիս 4—907 Ապրիլ 17 , յիշեալ |                   |
| 112,800 ֆր . ին բանած 70% տոկոսները | 6,952 85          |
| Մթերանոցի վարձք                     | 270 —             |
| Ղեւոնդ Վրդ . ին մասնաւոր պահանջքը   | 1,524 60          |
|                                     | <u>421,547 45</u> |

|                                |                  |
|--------------------------------|------------------|
| Վանքին թողուած զանազան նիւթե-  |                  |
| րուն արժէքը չեղեկով            | 1,547 45         |
| Վարձակալի կողմանէ վանքի հաշոյն |                  |
| վճարեալ գումար                 | <u>420,000 —</u> |

Արդ , Արբազան Հայր , այս ամենը կ'ապացուցա-

նեն թէ վարձակալը արդարեւ կտտարուծ է վանքին հանգէպ իր յանձնառութիւնները, ինչպէս զիտել տուած է իր գրին մէջ, ամբողջապէս վճարելով իր պարոքը  $70\%$  բազագրեալ տոկոսներովը հանգելա, համաձայն այն սույնանոգրըն, զոր ինձ հետ կնքած էր: Սակայն այժմ ցաւօք սրախ կը լսի՞ թէ վերոյիշեալ  $120,000$  ֆր. ի գումարէն սիայն  $90,000$  ֆր. մոտծ է վանքին մնտուկը, ինչպէս վանական առածակայ ժողովի կողմանէ պարձանօք յատարարուած է վերջերս Միարանական Ընդհ. Ժողովին մէջ՝ իրր թէ մեծ գուաւրութեամբ յաջսպած էր միայն այդքանը ձեռք բերել, և այս կերպիւ խարած է Ընդհ. Ժողովը, բանութեամբ խափանելով այդ մասին տեղի ոնեցած գիտութիւններն ու վիճարանութիւնները, ինչպէս նոյն միջոցին բռնաբար յառաջ տարուծ էին նաև Գէորգ Արքեպիսկոպոսի արտաքսման, լուսարապետի ընտրութեան, եպիսկոպոսացուի մը (Տ. Եղիշէ Ծ. Վ. Զիլինկիրեան [Պ.]) քուէտրկութեան ելն: Խնդրոց ապօրէն որոշումները: Իրաց այս վիճակին մէջ արժանի չէ արդեօք փնտուել թէ ուր մնացած է տարբերութիւնը, այսինքն մնացեալ  $30,000$  ֆրանքը: Վարձակալի կողմանէ դրկուած վերոյիշեալ հաշուեցացը ամեն կտտած և տարակոյս կը փարատէ, իր կողմէ  $120,000$  ֆրանք վճարուած ըլլալը այլ ես կատարեալ և սույգ իրողութիւն մ'է: Իսկ թէ ինչո՞ւ համար վարձակալի պարտուց վճարումը յապաղած է, այդ պարագան մեր վանական վարչութեան ապիկարութիւնն ու անհոգութիւնը միայն կ'ապացուցանէ և ոչ այլ ինչ, մանաւանդ երբ նկատողութեան առնուին այս խնդրայն նախընթաց պարագաները, որոց մասին նորագոյն և վստահելի տեղեկութիւններ ստացած եմ, որոցմէ կը հասկցուի թէ վարձակալը իր

պարտուց վճարման պայմանաժամէն (1905 Դեկտ 1, Ն. Տ.) երեք ամիս առաջ 1905 Սեպտ. ին իր կողմանէ ծանօթ ազգային մը փոխանորդ կը կարգէ վանքին հետ բանալիցութեան մանելու, իր պարտուց խնդիրը կարգադրելու և 10 տարւոյ համար նոր պայմանագիր մը կնքելու: Սակայն յիշեալ ազգայինը բացարձակապէս կը մերժուի յաջորդիս կողմանէ, խնդիրը անհոգութեան կը արուե՛ փոխանակ ինքնին փութուլ և ժամ առաջ բանակցութեան մանելու թէ վանքին պահանջներու գանձմանն և թէ՛ նոր վարձատուութեան մը համար, որք ըստ պայմանագրին պէտք է կարգադրուած ըլլալն 1905 Դկտ. 1էն (Ն. Տ.) առաջ, որուն համար արգէն վարձակալը կանխած էր յիշեալ եղանակաւ, և որուն համար արգէն ես առ առաջ կանխած էի Հաշուեքննիչ Յանձնաժողովին և կեդր: Վարչութեան ուշագրութիւնը հրաւիրել իմ զեկուցագրերովս: Ահա այս ընթացքին հետեւանօք է, որ վարձակալը իր պարտքը փոխանակ 1905 Դեկտ. 1ին վճարելու՝ 1907 Ապրիլ 17ին վճարած է. այնու ամենայնիւ այս յապաղումէն վանքին համար վեաս յառաջ չպիտի գար, քանի որ վարձակալը իր պարտքին  $70\%$  բազագրեալ տոկոսներովն հանգերձ վճարած է. մինչդեռ վանքը  $3-40\%$ ով կրնայ գրամ գանել, և հետեւաբար վանքը  $3-40\%$  աւելորդ շահ մ'ալ պիտի ունենար: Բայց այս շահեարուն փոխարէն վանքը այժմ յայտնապէս  $30,000$  ֆրանքի կամ  $4500$  Գաղ. ոսկիի անտեղի և անհարկի կորուստ մը ունենալէ զատ օթէլը երկու տարի պարապ կը թողուի, որմէ  $2400$  ոսկիի կորաւստ մը յառաջ կուգայ, և կը լսուի որ այժմ նոյն օթէլը  $10$  տարւոյ համար վարձու արուած է տարեկան  $750$  ֆալ, ոսկիալ, այն է, տարեկան  $450$  ոսկի պակաս

վարձքով, որ տասը տարւոյ մէջ 4300 սոկիի կորուստ  
մը կը ներկայացնէ: Հետեւաբար գումարելով յիշեալ  
երեք վասաները  $1500+2400+4500=8400$  սոկիի  
կորուստ մը յառաջ կուգայ իբր հետեւանք իրաց ներ-  
կայ անկերպարան վիճակին և վանական վարչու-  
թեան տիրապետող անձանց անհոգութեան, ապիկա-  
րութեան և չարաշահութեան:

Աւելորդ կը համարիմ յիշեցնել Պատկ . Ժողովոյդ  
թէ յիշեալ անձանց պատճառաւծ կորուսաները միայն  
այդքանով չկերջանար , կան ուրիշ մեծամեծ կո-  
րուսաներ , անտանելի զեղծումներ , քստմնելի ա-  
րարքներ , հրապարակային խայտառակութիւններ ,  
Ս . Տեղեաց մէջ Ազգ . իրաւանց կորուսաներ և ան-  
դարձանելի վնասներ , որով յառաջ բերին վանքին և  
Միաբանութեան նիւթական ու բարոյական անկումը  
և պարտքը չափազանց բարդեցին , և այս ամենը  
սքովելու համար անգոյ զեղծումներ և անհիմն պա-  
տասխանատութիւններ ստեղծեցին և անօվ զբա-  
ղեցուցին մինչև խակ կեդր . Վարչութիւնն ալ :

Համբուրիւ Ս. Աջոյ Բ. Արբագնութեանդ

ՀԵԽՈՆԴ ՎՐԴՊ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Կ. Պոլիս, 25 Յուլիս 1907



